ԳԼՈԲՈՒՍ

Հրատարակվում է
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ աջակցությամբ

4 (93)

ԵՐԵՎԱՆ

2018

ԳԼՈԲՈՒՍ

Թիվ 4 (93), 2018

«ԳԼՈԲՈՒՍ» ՏԵՂԵԿԱԳՐԻ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Աշոտ Թավադյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր

Աշոտ Թևիկյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների և Ռուս-հայկական (սլավոնական) համալսարանի կառավարման ամբիոնների դասախոս, տ.գ.թ.

Արա Մարջանյան
«Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, տ.գ.թ., ա.գ.ա.

Գագիկ Հարությունյան (համակարգող)
«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն, ք.գ.թ.

Կարեն Վ.Կարապետյան
Տնտեսագիտության դոկտոր

Մուշեղ Լալայան
ՀՀԿ փոխնախագահ

Սամվել Մանուկյան
«Նորավանք» ԳԿՀ ավագ փորձագետ, ս.գ.թ.

Վահագն Ազլյան
«Նորավանք» ԳԿՀ խորհրդական, ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Հանրային կառավարման ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ

Վարդան Հարությունյան
Տ.գ.թ.

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր
Գագիկ Հարությունյան

Գլխավոր խմբագրի տեղակալ
Արա Մարջանյան

Պատասխանատու խմբագիր
Խոնարհիկ Քարաուղլանյան

Պատասխանատու քարտուղար
Լուսինե Բաղրամյան

Խմբագիրներ
Արեստակես Սիմավորյան
Դիանա Գալստյան
Կարեն Վերանյան
Սամվել Մանուկյան
Վահագն Ազլյան
Վահրամ Հովյան

Էջադրող-ձևավորող
Տաթևիկ Քարաուղլանյան

ԳԼՈԲՈՒՍ

Թիվ 4 (93), 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գագիկ Հարությունյան
«Չինական շախմատ» 4

Անդրանիկ Հովհաննիսյան
Հնարավո՞ր են արդյոք դաշինքներ Արևելյան Ասիայում 9

Արմեն Մանվելյան
«Եվրոպայի ատոմային էներգիայի համայնք» կազմակերպությունը 14

Կարեն Վերանյան
Նոր մարտահրավերներ Իրան-Իսրայել դիմակայությունում 18

Հայկ Գաբրիելյան
Քրդական գործոնը Թուրքիայի արտահերթ ընտրություններում 25

Սամվել Մարտիրոսյան
Ուղիղ եթերների հեղափոխությունը 33

Վահրամ Հովյան
Հայրենադարձների ինտեգրման խնդրի շուրջ 38

Հուշագիր հեղինակին 45

«ՉԻՆԱԿԱՆ ՇԱԽՄԱՏ»

Գագիկ Հարությունյան[*]

Ինչպես նշել ենք նախկինում, միաբևեռ աշխարհակարգի փլուզումն ընթանում է տուրբուլիզացված, անկանոն ռեժիմով, ինչը հանգեցրել է գլոբալ քաղաքական, ռազմական և տնտեսական հարթության ֆրագմենտացման [1]: Միևնույն ժամանակ, չնայած հիբրիդային իրողություններում իրականացվող քաղաքականության ժանրերը գրեթե լիակատար միախառնվել են, սակայն այդ գործընթացներն ունեն իրենց յուրահատկությունները, որոնք պայմանավորված են այս կամ այն տարածաշրջանի էթնիկական և քաղաքակրթական հատկանիշներով: Այս համատեքստում ուշագրավ են այն զարգացումները, որոնք տեղի են ունենում Կորեական թերակղզում՝ արևելյան «ավագ եղբոր»՝ Չինաստանի ամենաակտիվ մասնակցությամբ:

«Շառագունում է արևելքը». Հայտնի է, որ գլոբալ հարթությունում տնտեսական և քաղաքական զարգացումների կենտրոնը, շնորհիվ Չինաստանի ընդհանուր ռեսուրսների տպավորիչ աճի, նկատելիորեն տեղափոխվել է դեպի արևելք: Վերջին 20 տարիներին այդ երկրի ՀՆԱ-ն ավելացել է մոտ 13 անգամ և ներկայում ավելին է, քան $12 տրլն-ն: Պակաս տպավորիչ չեն նաև ձեռքբերումները գիտատեխնոլոգիական ոլորտում, որին ՉԺՀ-ն 2016թ. հատկացրել է մոտ $400 մլրդ, ինչը կազմում է համաշխարհային ծախսերի հինգերորդ մասը[1] (տե՛ս նաև [2]): Այս հաջողությամբ Չինաստանը պարտական է այն բանին, որ առանցքային համարելով ազգային-պահպանողական դիրքորոշումները (դրանք ընդհանրացված կերպով անվանենք կոնֆուցիական)՝ կարողացավ համադրել սոցիալիստական և լիբերալ գաղափարախոսությունների առավելությունները [3]: Միևնույն ժամանակ, այդ երկիրն իրականացնում է քաղաքականություն՝ հենվելով չինական ռազմավարության հարուստ ավանդույթների վրա, որը մեկնաբանվում է որպես «ապագայի զավթում»: Նշենք նաև, որ չինացիները «ժամանակ» հասկացությունն ընկալում են էա-

[*] «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի գործադիր տնօրեն:
[1] 2016 Global R&D funding forecast. A Supplement to R&D Magazine. Winter, 2016.

պես այլ կերպ, քան դա ընդունված է արևմտյան քաղաքակրթություններում: Այս համատեքստում կարելի է արտահայտվել այն ոգով, որ եթե «շախմատի մեծ տախտակը» (Զ.Բժեզինսկու արտահայտությամբ) այլ տարածաշրջաններում վերածվում է «քիքբոքսինգի» մրցասպարեզի, ապա չինացիները հնարավորության սահմաններում ջանում են խաղալ իրենց չինական շախմատը՝ *«գո»*-ն, որի կանոնները և օրենքները բոլորը չէ, որ գիտեն:

Բնական է, որ վերը թվարկված գործոնները տագնապեցնում են Չինաստանի աշխարհաքաղաքական մրցակիցներին, առաջին հերթին՝ ԱՄՆ-ին, որը, մասնավորապես, ՉԺՀ-ն համարում է գլխավոր սպառնալիք իր վերջերս ընդունած ազգային անվտանգության ռազմավարությունում: Արդի հիբրիդային իրողություններում համաշխարհային առաջատարի այս մտահոգությունը դրսևորվում է գրեթե բոլոր ոլորտներում իրականացվող գործողություններում:

«Սիմետրիկ տնտեսական պատերազմ». Ինչպես հայտնի է, ԱՄՆ-ի հետ ՉԺՀ ապրանքաշրջանառությունը հասնում է $600 մլրդ-ի, իսկ չինական արտահանումը գերազանցում է ամերիկյանը մի քանի անգամ: Ուստի, սեփական արտադրողներին խրախուսելու իր նոր քաղաքականության համաձայն՝ ԱՄՆ-ը բարձր մաքսատուրքեր է մտցրել չինական բազմաթիվ ապրանքների համար: Ի պատասխան՝ ՉԺՀ-ն նույնպես բարձրացնում է ներկրվող ամերիկյան ապրանքների մաքսատուրքերը՝ զուգահեռաբար շարունակելով ԱՄՆ-ին դուրս մղել խաղաղօվկիանոսյան համագործակցության նախագծերից և իրականացնում է տնտեսական էքսպանսիա արևմտյան ուղղությամբ՝ «մեկ գոտի՝ մեկ ճանապարհ» նախագծի միջոցով: Այս ամենը վկայում է այն մասին, որ տնտեսական ոլորտում, չնայած չինական առանձնահատկության տարրերի առկայությանը, ՉԺՀ-ի և ԱՄՆ-ի միջև մրցակցությունն ընթանում է մոտավորապես սիմետրիկ ռեժիմով: Միևնույն ժամանակ, չի կարելի բացառել, որ այս ամենն ընդամենը սկիզբն է: Օրինակ, բավական տագնապալի զարգացում է Վաշինգտոնի համար՝ իր վիթխարի արտաքին պարտքով հանդերձ, նավթային ֆյուչերսները յուանով վաճառելու Պեկինի ձգտումը: Այս ուղղությամբ հաջորդ քայլը կարող է դառնալ ոսկով ապահովմանն անցնելը միջազգային հաշվարկներում, ինչը կարող է փլուզել Բրետոն-Վուդյան համակարգը, որի վրա է հիմնված ամերիկյան ամբողջ տնտեսությունը[2]: Սակայն հարկ է նկատի ունենալ, որ նման զարգացման պարագայում գրեթե անխուսափելի գլոբալ տնտեսական կոլապսը ոչ վերջին հերթին կանդրադառնա նաև ՉԺՀ-ի վրա, որի ներդրումներն ամերիկյան

[2] Տե՛ս, օրինակ, *Золото как туз в рукаве,* http://inosmi.info/zoloto-kak-tuz-v-rukave.html

ակտիվներում հասել են մոտավորապես $1,2 տրլն-ի։ Ուստի, ամենայն հավանականությամբ առաջիկայում զարգացումներն այս ուղղությամբ կընթանան «սպառնալիքն ավելի ուժեղ է կատարումից» ռեժիմով։

Սակայն, անկախ ապագայի հնարավոր սցենարներից, հարկ է փաստել, որ գլոբալ տնտեսությունում ԱՄՆ-ի համար երկար տարիներ հետո առաջին անգամ ի հայտ է եկել հզոր մրցակից, և նման անսովոր իրավիճակը լրջագույն մարտահրավեր է Վաշինգտոնին։ Իսկ ՉԺՀ-ԱՄՆ դիմակայությունը ռազմաքաղաքական ոլորտում, ի տարբերություն տնտեսականի, ընթանում է յուրօրինակ և ոչ սիմետրիկ ռեժիմով, ինչը նույնպես Վաշինգտոնի համար անախորժ հանգամանք է։

«Գռ»-ի պարտիան «կորեական ճակատում». Հայտնի է, որ Չինաստանը տարածքային վեճ ունի Ճապոնիայի հետ Արևելաչինական ծովի Սենկակու կղզու շուրջ։ Իրավիճակը գրեթե նույնն է նաև Հարավչինական ծովում, որտեղ չինացիները Վիետնամի հետ վիճարկում են Պարսելյան կղզիների պատկանելության իրավունքը։ Այս երկար վեճերում ԱՄՆ-ը ոչ երկիմաստորեն աջակցում է համապատասխանաբար՝ Ճապոնիային, Վիետնամին և վեճերի մյուս մասնակիցներին, սակայն դիմակայությունն ընդհանուր առմամբ տեղի է ունենում չինական ոգով. ՉԺՀ-ն արհեստական կղզիներ է կառուցում վիճելի տարածքներում, այնտեղ հրթիռներ է տեղակայում, երկարատև ու հանգամանալից բանավեճեր է վարում, բազմաթիվ դիվանագիտական ուղերձներ է փոխանակում իր ընդդիմախոսների հետ, և այս ամենն արվում է չինական փիլիսոփայությանը համապատասխան, որը գրեթե հաշվի չի առնում ժամանակի գործոնը։

Սկզբունքորեն այլ իրավիճակ է ստեղծվել Կորեական թերակղզում, որտեղ տեղեկատվա-դիվանագիտական առճակատումը ԿԺԴՀ-ի և ԱՄՆ-ի միջև կարող էր անցնել «թեժ փուլի» և դրանով իսկ անմիջականորեն սպառնալ ՉԺՀ-ին։ Տպավորություն է ստեղծվում, թե այսօր չինացիների հիմնական ուշադրությունը սևեռված է հենց այս «ճակատին», որտեղ 1950-53թթ. արյունալի կորեական պատերազմի ժամանակ զոհվեց մոտ 4,5 մլն մարդ (նրանց թվում՝ 1 մլն չինացի)։ Սակայն դիմակայությունը կորեական պետությունների միջև չավարտվեց, և այն, տարբեր ձևեր ընդունելով, շարունակվել է մինչև վերջին ժամանակներս։ Բնականաբար, այս զարգացումներում ոչ միայն ԱՄՆ-ը, այլ նաև ՉԺՀ-ն է ունեցել ամենաանմիջական մասնակցություն։ Իրավիճակը հատկապես սրվեց արդեն մեր ժամանակներում՝ կապված ԿԺԴՀ հրթիռամիջուկային ծրագրի և Փհենյանի հասցեին ամերիկյան նոր վարչակազմի հուզական արտահայտությունների հետ։

Թերևս քչերն են կասկածում, որ Հյուսիսային Կորեան արդի սպառազինությունների մշակման ոլորտի իր հաջողություններով հիմնականում պարտական է Չինաստանին։ Այդ երկրների կողմից վերահսկվող մոտ 1500 կմ երկարությամբ ցամաքային սահմանը նպաստում է, որպեսզի չինացիները համապատասխան տեխնոլոգիաներ փոխանցեն հյուսիսկորեացիներին, որոնք չինական արտաքին քաղաքականությունում կատարում էին կոշտ, այսպես կոչված «վատ քննիչի» դեր։

Կորեական միջուկային զենքի հարցը, ամենայն հավանականությամբ, լրացուցիչ ակտուալացվեց տխրահռչակ «արաբական գարնան» ընթացքում, երբ երբեմնի ինքնիշխան երկրներն ընկղմվեցին այսպես կոչված «կառավարելի քաոսի» մեջ, իսկ նրանց՝ արևմտյան չափանիշներով պրոբլեմատիկ որոշ առաջնորդներ ցուցադրաբար մահապատժի ենթարկվեցին։ Այդ ժամանակ արդեն վերլուծաբանները նշում էին, որ նման վերջաբանից կարելի էր խուսափել լոկ այն դեպքում, եթե այդ արաբական երկրներն ունենային միջուկային զենք կամ էլ կարողանային, ինչպես իրանցիները, օպերատիվ կերպով ստեղծել այդ զենքը։ Ուստի, բնավ զարմանալի չէ, որ հենց այդ շրջանում ԿԺԴՀ-ն, տեղեկատվական և հոգեբանական ճնշման ֆոնին, որի կարևոր տարրն էին ամերիկյան նավատորմի ցուցադրական զորավարժությունները, ձեռնամուխ եղավ սեփական հրթիռամիջուկային ուժերի ստեղծմանը՝ որպես հնարավոր ուժային և փափուկ («գունավոր» հեղափոխությունների ձևով) հավակնությունների զսպման միջոց։

Ինչևէ, Վաշինգտոնի մեղադրանքների թունդ պահին, երբ շատերն արդեն մտածում էին միջուկային պատերազմի տերմիններով, Փհենյանն անսպասելիորեն սկսեց բավական արդյունավետ «օլիմպիական դիվանագիտություն» Հարավային Կորեայի հետ։ Այս առնչությամբ նշենք, որ հարավկորեական հանրության մի որոշակի հատվածը, համաձայն ավելի վաղ անցկացված սոցհարցումների, բավական լոյալ է վերաբերվում ոչ միայն ԿԺԴՀ-ին, այլև նրա միջուկային ծրագրին (ինչն ըստ էության զարմանալի չէ և բնական է)։ Այս առնչությամբ գրեթե կասկած չի հարուցում այն, որ Պեկինը, ռազմականի կողքին, Փհենյանին է փոխանցում Սուն Ցզիի ռազմավարական գաղափարներով և *«գո»*-ի սկզբունքներով հագեցած քաղաքական տեխնոլոգիաները։ Գուցե հյուսիսկորեական առաջնորդի այցելությունը Պեկին կարելի է ընկալել, ի թիվս այլ քաղաքական հանգամանքների, նաև որպես երախտագիտություն նման ինտելեկտուալ աջակցության համար։ Իսկ այցելությանը հաջորդեց ԿԺԴՀ հայտարարությունը հրթիռամիջուկային փորձարկումները դադարեցնելու մասին, այնպես որ՝

արդյունքում երկուստեք հնչող ռազմաշունչ հռետորաբանությունը վերափոխվեց դիվանագիտական գործընթացի: Զուգահեռաբար մեկնարկեց Կիմ Չեն Ըն—Դոնալդ Թրամփ հանդիպման ակտիվ նախապատրաստությունը:

Հատկանշական է նաև, որ միջկորեական հանդիպումների ընթացքում հնչեցվեց նաև Կորեայի միավորման գաղափարը: Այս առիթով նշենք, որ Փհենյանը, սկսած 2012թ., իրականացնում է սեփական տնտեսության ազատականացման քաղաքականություն, որը շատ բանով հիշեցնում է ռեֆորմները Չինաստանում Դեն Սյաոպինի կառավարման նախնական շրջանում[3], այսինքն՝ այդ քաղաքականության մեջ ևս շատ են «չինական դեղատոմսերը»: Ելնելով այս միտումներից՝ չի կարելի բացառել, որ ապագայում Կորեայի միավորման գաղափարը կարող է ձեռք բերել իրական ուրվագծեր, ինչպես դա եղավ Գերմանիայի պարագայում: Միևնույն ժամանակ, հիմքեր կան ենթադրելու, թե ապագայի այդ նոր պետությունն, ամենայն հավանականությամբ, կմտնի Չինաստանի ազդեցության ոլորտ: Ակնհայտ է նաև, որ նման սցենարի հնարավորությունը հաշվարկել են նաև ամերիկյան ստրատեգները, և այդ համատեքստում պետք է ընկալել հենց այս ժամանակահատվածում նրանց՝ Հարավային Կորեայի հետ համատեղ հերթական զորավարժություններ իրականացնելու մտադրությունը: Այդ նախաձեռնությունը սուր արձագանք գտավ Փհենյանում և հարվածի տակ դրեց հետագա ողջ բանակցային գործընթացը: Սակայն պետք է կարծել, որ չինական յուրօրինակ և խոր ռազմավարական մտածողությունը թույլ կտա լուծումներ գտնել նաև ստեղծված նոր իրավիճակում:

Գրականություն

1. *Հարությունյան Գ.,* Ֆրագմենտացված կամ «մինչվեստֆալյան» աշխարհակարգ, «Գլոբուս», #2, (91), էջ 5, 2018, *Арутюнян Г.,* Фрагментированный или «довестфальский» миропорядок, http://www.noravank.am/rus/articles/detail.php?ELEMENT_ID=16546.
2. *Арутюнян Г., Марджанян А.,* Духовно-технологические ресурсы и вопросы союзничества в гибридных войнах // 21-й Век, 4 (45), 2017.
3. *Арутюнян Г.,* Идеология - критическая сфера в гибридных войнах, Геополитика и безопасность #4(40), с. 113, 2017, *Арутюнян Г.,* Критические инфраструктуры и идеология, 21-й ВЕК, #2(43). с. 5, 2017, «Տեղեկատվական անվտանգություն», *նախագծի ղեկավար և գլխ. խմբ.՝ Գ.Հարությունյան,* Երևան, 2017թ.:

[3] http://www.webeconomy.ru/index.php?page=cat&newsid=1883&type=news

ՀՆԱՐԱՎՈ՞Ր ԵՆ ԱՐԴՅՈՔ ԴԱՇԻՆՔՆԵՐ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՍԻԱՅՈՒՄ

Անդրանիկ Հովհաննիսյան[*]

2000թ. առաջին տասնամյակի կեսերից որոշ քաղաքական փորձագետներ սկսեցին ակտիվորեն անդրադառնալ Արևելյան Ասիայում հզոր ռազմական դաշինքի հնարավոր ձևավորման թեմային, որտեղ գլխավոր դերը պատկանելու էր Պեկինին: Թեման միջազգային լայն արձագանք ստացավ ՉԺՀ-ի, Ճապոնիայի և Հարավային Կորեայի ներկայացուցիչների եռակողմ հանդիպումից հետո՝ *ACEAH + 3* (Հարավարևելյան Ասիայի պետությունների ասոցիացիա) 2004թ. գագաթաժողովի (Վիետնամ) շրջանակներում: 2007թ. նոյեմբերին այդ պետությունների առաջնորդները հերթական եռակողմ հանդիպումն իրականացրին, որի ընթացքում բարձրացվեց երեք երկրների միջև քաղաքական երկխոսության և խորհրդակցությունների ամրապնդման հարցը [1]: 2008-2010թթ. այս պետությունների միջև երեք փուլով բանակցություններ անցկացվեցին, որոնց արդյունքներով 2011թ. սեպտեմբերին Սեուլում ստորագրվեց համաձայնագիր Համագործակցության եռակողմ քարտուղարության (ՀԵՔ) ստեղծման մասին: Կանոնադրության համաձայն՝ կազմակերպության գլխավոր քարտուղարը նշանակվում է երկու տարով՝ հետևյալ հերթականությամբ. Հարավային Կորեա, Ճապոնիա և Չինաստան: Յուրաքանչյուր երկիր, բացի գլխավոր քարտուղարի երկրից, նշանակում է գլխավոր քարտուղարի իր տեղակալին: Քարտուղարության խորհրդակցական մարմնի կազմում ընդգրկվում են բոլոր երեք պետությունների բարձրաստիճան ներկայացուցիչները՝ հավասար իրավունքներով՝ նախագահներ, վարչապետեր և ԱԳ նախարարներ:

2012թ. ՉԺՀ-ն, Ճապոնիան և Հարավային Կորեան համաձայնություն ձեռք բերեցին ստեղծելու Ազատ առևտրի գոտի (ԱԱԳ) երեք երկրների միջև՝ *ACEAH* երկրների հետ հետագա ինտեգրման հեռանկարով [1]: Ամեն տարի ՉԺՀ-ի, Ճապոնիայի և Հարավային Կորեայի ղեկավարներն ու նախարարները համատեղ եռակողմ հանդիպումներ են իրականացնում՝ սերտ

[*] «Նորավանք» ԳԿՀ փորձագետ:

համագործակցություն զարգացնելով տարբեր ոլորտներում: 2011թ. խորհրդակցական մարմնի ստեղծումը բավական նշանակալի տարածաշրջանային և անգամ համաշխարհային գործոն է, որի հետ հարկադրված են լինելու հաշվի նստել աշխարհի առաջատար պետությունները: ՉԺՀ-ի, Ճապոնիայի և Հարավային Կորեայի 2015-16թթ. որոշ հանրագումարային ցուցանիշներ ներկայացված են *Աղյուսակ 1*-ում.

Աղյուսակ 1[1]

Մակերես	Բնակչություն	ՀՆԱ ($)	Արտահանում	Ռազմական բյուջե	Զինված ուժերի թվաքանակ
10 մլն կմ²	1,6 մլրդ մարդ	$18,6 տրլն	$3,2 տրլն	$297,2 մլրդ	3,1 մլն մարդ

Անշուշտ, նման սերտ համագործակցության հետագա զարգացումը մեծ օգուտ կբերի Արևելյան Ասիայի երեք առաջատար պետություններին: Նրանց արդեն հիմա բաժին է ընկնում ընդհանուր տարածաշրջանային առևտրի ավելի քան 60%-ը, Երկիր մոլորակի բնակչության ընդհանուր թվի 22%-ը և Ասիայի ՀՆԱ 75%-ը (համաշխարհային ՀՆԱ ավելի քան 25%)[2]:

Հարավային Կորեան, Ճապոնիան և Չինաստանն ակտիվ առևտրատնտեսական և մշակութային-հումանիտար համագործակցություն են ծավալում, բայց որքանո՞վ է իրատեսական ռազմաքաղաքական համագործակցության զարգացումը «արևելաասիական եռապետության» միջև: Փորձենք պրագմատիկ մոտեցում ցուցաբերել հարցի պատասխանին՝ հենվելով պատմական նախադրյալների և աշխարհակարգի ներկա դրության վրա՝ անդրադառնալով սույն պետությունների առավել խոցելի կրիտիկական ենթակառուցվածքներին:

Պատմական տարաձայնություններ. Հայտնի է, որ երեք երկրների միջև գոյություն ունեն պատմական տարաձայնություններ, որոնք անջնջելի հետք են թողել նրանց հարաբերություններում անգամ արդի փուլում: Մասնավորապես, խոսքը վերաբերում է XIX-XXդդ. կայսերական Ճապոնիայի ագրեսիային արևելաասիական տարածաշրջանում, ինչպես նաև Չինաստանի չինակենտրոն կոնֆուցիական գաղափարախոսությանը, որն այդ ժողովուրդներին դասում է *«ֆան»* («բարբարոսներ» կամ «վասալներ») կարգում: Միևնույն ժամանակ, երեք պետությունների միջև գոյություն ունեն տարածքային վեճեր,

[1] Աշխարհի երկրների վիճակագրական տվյալներ, http://mostinfo.su/665-statisticheskie-dannye-stran-mira-po-dannym-vsemirnogo-banka.html

[2] Համագործակցության եռակողմ քարտուղարության պաշտոնական կայք, http://tcs-asia.org/

որոնցում ԱՄՆ-ը պաշտպանում է Ճապոնիային և Հարավային Կորեային: Այդ երկրներն իրենց ինքնիշխանության, անվտանգության հարցում հենվում են հենց Վաշինգտոնի վրա, իսկ նրանց տարածքներում տեղակայված ԱՄՆ, Ճապոնիայի և Հարավային Կորեայի ռազմակայանների նպատակն է՝ զսպել ՉԺՀ-ն: Բայց կա նաև մեկ այլ՝ ոչ պակաս կարևոր գործոն, որը խոչընդոտում է Արևելյան Ասիայի առաջատար երկրների ավելի սերտ մերձեցմանը:

Չինաստանն ընդդեմ ռազմական դաշինքների. Հայտնի է, որ ՉԺՀ-ն այն միջազգային կազմակերպության դիտորդ երկիր է հանդիսանում, որն ըստ ռազմական դաշինքներին չմասնակցության սկզբունքի («Չմիանալու շարժում») միավորում է աշխարհի 120 երկրների: Վերջին 50 տարիների ընթացքում Չինաստանն ամեն կերպ փորձում է հեռու մնալ ռազմական դաշինքներ ստեղծելուց կամ դրանց մասնակցելուց: Սա այն ուղեգիծն է, որը դեռևս 1970-ական թթ. վերջից որդեգրել է չինական բարեփոխումների հիմնադիր Դեն Սյաոպինը [2]: Չինաստանը կողմնակից է աշխարհի առաջատար տերությունների՝ Ռուսաստանի և Արևմուտքի (ԱՄՆ և Եվրոպա) միջև ընթացող առճակատման դիտորդը լինելու քաղաքականությանը:

Հաշվի առնելով Պեկինի, Տոկիոյի և Սեուլի միջև հնարավոր ռազմաքաղաքական համագործակցության՝ վերը թվարկված բավական խոցելի դիրքորոշումները՝ մենք կարծում ենք, որ նման դաշինքի հավանականությունը խիստ ցածր է: Այս պետություններն այսուհետ ևս սերտ առևտրատնտեսական հարաբերություններ կպահպանեն հավասար և փոխզիջումային հիմքի վրա: Սակայն, նկատի ունենալով արդի միջազգային գործընթացները, մասնավորապես, տարաձայնությունները Պեկինի և Վաշինգտոնի միջև, հարցականի տակ կարող են հայտնվել նաև սերտ տնտեսական հարաբերությունները ՉԺՀ-ի, Ճապոնիայի և Հարավային Կորեայի միջև: Ավելին, Պեկինին մտահոգում է ամերիկացիների կողմից իր սահմանների մոտ, Հարավային Կորեայում և Ճապոնիայում ՀՕՊ տեղակայման հարցը[3]: Սեուլի և Տոկիոյի նման դիրքորոշումն, անկասկած, ապակառուցողական ազդեցություն կունենա արևելասիական այս երեք պետությունների հետագա ինտեգրման վրա:

Ներկա պահին, եթե ընդհանուր առմամբ խոսելու լինենք տարածաշրջանի մասին, ապա Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանը (ԱԽՕՏ) ներառում է համաշխարհային ՀՆԱ 40%-ը և համաշխարհային ապրանքաշրջանառության մոտ 60%-ը: Տնտեսական ոլորտի առաջատար

[3] *Ованнисян А.,* США-Китай: переосмысление стратегии или пролонгирование политики «сдерживания», http://www.diplomat.am/load/andranik_oganisjan/1/41-1-0-819

վերլուծաբանների կարծիքով՝ 2030թ. սպասվում է համաշխարհային ՀՆԱ-ի համեմատ ԱԽՕՏ երկրների ՀՆԱ մինչև 70% աճ: Դինամիկ զարգացող այս տարածաշրջանի տնտեսական ցուցանիշների աճի տեմպերն ամեն տարի գնահատվում են ավելի քան 5%: Բացի այդ, ԱԽՕՏ զարգացող և զարգացած պետությունները բարձր տեխնոլոգիաների խոշորագույն արտահանողներն ու ներմուծողներն են հանդիսանում: Սակայն որևէ լուրջ ռազմաքաղաքական դաշինք՝ առանց ԱՄՆ մասնակցության, տարածաշրջանում գոյություն չունի: Վաշինգտոնը արևելասիական տարածաշրջանում ռազմաքաղաքական և ինտեգրացիոն միավորումների ստեղծման հիմնական պատնեշն է: ԱՄՆ նախորդ վարչակազմի (նախագահ Բ.Օբամայի գլխավորությամբ)՝ նոր աշխարհակարգ հաստատելու փորձերը, որտեղ առաջատար գլոբալ դերակատարներ պիտի դառնային Վաշինգտոնն ու Պեկինը, բնականաբար՝ Միացյալ Նահանգների որոշակի առաջնորդությամբ, հաջողություն չունեցան: Ամերիկացիները բախվեցին Պեկինի «լուռ կեցվածքին» ամերիկա-չինական երկպետության (դուումվիրատ) սկզբունքով նոր աշխարհակարգի ձևավորման հարցերում: Չնայած նախընտրական բոլոր պոպուլիստական կարգախոսներին՝ ԱՄՆ նոր վարչակազմը՝ նախագահ Դ.Թրամփի գլխավորությամբ, կշարունակի Չինաստանի «զսպման» քաղաքականությունը: Պեկինի և Վաշինգտոնի միջև խոշոր առևտրատնտեսական հարաբերությունները գլխավոր կապող օղակն են փոխադարձ ռազմավարական վստահության զարգացման համար: Իզուր չէ, որ ասում են. «Բարեկամներիդ մոտ պահիր, բայց թշնամիներիդ՝ ավելի մոտ»: Կարծում ենք, որ ստորև նշված երեք կետերը Վաշինգտոնի քաղաքականության առավել կարևոր գործիքներն են թվում Պեկինի հետ «մերձեցման» շրջանակում.

- Ասիա-խաղաղօվկիանոսյան տնտեսական համագործակցության և տարածաշրջանային այլ կազմակերպությունների օգտագործում երկու երկրների միջև վստահելի հարաբերությունների հաստատման համար,
- մեծ ջանքերի գործադրում «Երկկողմ ներդրումային պայմանագրի» (*BIT*) վերաբերյալ բանակցություններում,
- հրաժարում «Տրանսխաղաղօվկիանոսյան գործընկերությունից» (*TPP*)՝ Պեկինի հետ երկկողմ հարաբերություններ հաստատելու համար:

Արևելյան և Հարավարևելյան Ասիայի երկրների մեծ մասը նախկինի պես շարունակում է Վաշինգտոնը համարել որպես տարածաշրջանային անվտանգության գլխավոր երաշխավոր, իսկ Պեկինը՝ որպես սրընթաց

տնտեսական զարգացման հնարավորություն: Այդ պատճառով Վաշինգտոնին անհրաժեշտ է, որպեսզի Պեկինի և նրա տարածաշրջանային դաշնակիցների միջև պահպանվի մի ինչ-որ քաղաքական լարվածություն, ինչը կստիպի այդ երկրներին հենց ԱՄՆ-ը համարել «տարածաշրջանային անվտանգության երաշխավոր»: Չնայած *TPP*-ից հրաժարվելուն՝ Վաշինգտոնը, պահպանելով իր աննախադեպ ռազմական պոտենցիալը տարածաշրջանում, կշարունակի վաղեմի քաղաքական և տնտեսական երկկողմ հարաբերությունների ամրապնդումն ու զարգացումը բոլոր երկրների հետ, որոնք մինչ այդ հայտարարում էին, որ ցանկանում են միանալ «Տրանս-խաղաղօվկիանոսյան գործընկերությանը»:

Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանը եղել և մնում է կարևոր տարածաշրջան Միացյալ Նահանգների կողմից իր ռազմավարական ազգային շահերն իրականացնելու համար: Սակայն, նկատի ունենալով այն, որ ՉԺՀ-ն ԱՄՆ կարևոր առևտրատնտեսական գործընկերն է, Վաշինգտոնը չի կարող միակողմանի տնտեսական պատժամիջոցներ մտցնել՝ դրանով իսկ գնալով Պեկինի հետ ուղղակի առճակատման, ինչը կհանգեցնի լուրջ խնդիրների հենց ամերիկացիների համար: Այս առնչությամբ Չինաստանի զսպման հարցի առավել գործնական լուծումը վերջինին տարածաշրջանային հակամարտության մեջ ներքաշելն է վիճելի կղզիների հետ կապված (Թայվան, Սպարտլի կամ Դյաոյույդաո/Սենկակու): Իսկ իրենց՝ չինացիների պրագմատիկությունը, որոնց կառավարող իշխանությունն ընդհուպ մինչև մեր օրերը հետևում է Կոնֆուցիուսի պատգամներին, ոչ մեկի կասկածները չի հարուցում, ուստի Վաշինգտոնի համար խիստ դժվար կլինի իրականացնել այս սցենարը:

Գրականություն

1. *Matsukawa R.,* The Tripartite summit: results and prospects of development, Tokyo, 2014.
2. *Choe S.,* China, Japan and South Korea Pledge to Expand Trade at Joint Meeting, Tokyo, 2015.

«ԵՎՐՈՊԱՅԻ ԱՏՈՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՀԱՄԱՅՆՔ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

Արմեն Մանվելյան[*]

Հայաստան-Եվրամիություն պայմանագիրը, ինչպես հայտնի է, իրականում եղել է եռակողմ, այն ստորագրել է նաև «Եվրոպայի ատոմային էներգիայի համայնք» (ԵԱԷՀ-Եվրոատոմ) կազմակերպությունը[1]: Այս կառույցի մասնակցությունը Հայաստանի Հանրապետության և Եվրոպայի միության միջև կնքված ռազմավարական նշանակության պայմանագրի կնքմանը պատահական չէ: ԵԱԷՀ-ն այս կառույցի՝ ԵՄ-ի հիմնադիր կազմակերպություններից մեկն է, հետևաբար այդ կազմակերպության մասնակցությունը ՀՀ-ի հետ պայմանագրի կնքմանը հուշում է այդ փաստաթղթի ռազմավարական բնույթը և կարևորությունը պաշտոնական Բրյուսելի համար:

Հիշեցնենք, որ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո եվրոպական երկրները ձեռնամուխ եղան խաղաղ գոյակցության նոր սկզբունքների ստեղծմանը, և առաջին պայմանագիրը, որ կնքվեց, Ածխի և պողնձի պայմանագիր էր 1951թ.[2], որով խաղի ընդհանուր կանոններ էին սահմանվում այդ ոլորտում և ընդհանրապես նոր ընդլայնված շուկա էր ստեղծվում այդ բնագավառում: Պայմանագիրը կնքեցին եվրոպական վեց պետություններ՝ Ֆրանսիան, Գերմանիան, Իտալիան, Բելգիան, Նիդեռլանդները և Լյուքսեմբուրգը: Այս պետությունները սկսեցին մի գործընթաց, որը շարունակություն ունեցավ և որին միացան արևմտաեվրոպական այլ պետություններ ևս:

Էներգետիկ ոլորտում սկսված համագործակցությունն այնքան հաջողված էր, որ այս պայմանագրի հիմնադիրները որոշեցին շարունակել համագործակցությունն այս բնագավառում և առանձին համաձայնագիր պատրաստեցին արդեն միջուկային էներգիայի խնդրի շուրջ: Անցած դարի 50-ական թթ. միջուկային էներգետիկան նոր էր սկսում զարգանալ, սակայն բոլորն էլ հասկանում էին, որ դա հեռանկարային է, և միաժամանակ պարզ

[*] ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պ.գ.թ.:

[1] Ի՞նչ խնդիրներ կան Հայաստան-Եվրամիություն-«Եվրոատոմ» համաձայնագրում, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=16124&sphrase_id=66997

[2] The signing of the Rome Treaties, https://www.cvce.eu/obj/the_signing_of_the_rome_treaties-en-2f643b3d-aba2-422c-8a94-79a0531e6559.html

էր, որ Եվրոպան պետք է միավորվի, որ այս հարցում կարողանա մրցակցել այս բնագավառում առաջատար պետությունների՝ ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի հետ:

Եվրոպական միջուկային շուկայի ստեղծման պայմանագրի ստորագրումը եվրոպացիները կարևորում էին նաև մերձավորարևելյան նավթից իրենց կախվածությունը նվազեցնելու տեսանկյունից: Բացի այդ, եվրոպական զարգացող արդյունաբերությունն էներգիայի նորանոր չափաբաժին էր «պահանջում», հետևաբար էներգիայի նոր, տեխնոլոգիապես առաջատար, այլընտրանքային աղբյուրների ստեղծումը և բազմազանեցումը բխում էին եվրոպացիների շահերից:

Բանակցություններն այս հարցի շուրջ սկսվեցին 1956թ. Իտալիայի և Գերմանիայի նախաձեռնությամբ: Սակայն բանակցություններն սկզբում ընթանում էին բավական բարդ պայմաններում, քանի որ միջուկային տեխնոլոգիայի տիրապետող Ֆրանսիան սկզբում դեմ էր այս համաձայնագրի ստորագրմանը: Վերջինս, հասկանալի պատճառներով, չէր ցանկանում այս տեխնոլոգիաները տրամադրել գործընկեր պետություններին, սակայն մեկ ընդհանուր շուկայի ստեղծման գաղափարը և միջուկային էներգիայի զարգացման առանձին պայմանագիր ունենալու հեռանկարը՝ խաղի ընդհանուր կանոնների ամրագրմամբ, որը նաև հնարավորություն էր տալիս մրցակցել ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի հետ, պաշտոնական Փարիզին ստիպեց գնալ զիջումների և դնել իր ստորագրությունը: Այսպիսով, եվրոպացիների համար բացվում էր նոր հնարավորություն՝ այլընտրանք ունենալ ածխին ու նավթին՝ նվազեցնելով կախվածությունը ներմուծումներից, և բարձրացնել էներգետիկ անվտանգության մակարդակը:

Երկարատև բանակցություններն ավարտվեցին 1957թ. մարտի 25-ին համաեվրոպական նոր կառույցի ստեղծման պայմանագրի կնքմամբ[3]: Այսպիսով, Իտալիայի մայրաքաղաք Հռոմում ընթացող բանակցություններն ավարտվեցին, այսպես կոչված, Հռոմեական համաձայնագրի կնքմամբ, որով ստեղծվում էր համաեվրոպական երկու նոր կառույց՝ «Եվրոպական տնտեսական համայնքը» և «Եվրոպայի ատոմային էներգիայի համայնքը»:

Վերը նշված պայմանագրերն ուժի մեջ մտան 1958թ. հունվարի 1-ին: «Եվրոպական ատոմային էներգիայի համայնք» (Եվրոատոմ) կոչվող կազմակերպությունը և «Եվրոպական տնտեսական համայնք» կառույցները սկսեցին գործել: Այս երեք կառույցները՝ Ածխի և պողնձի պայմանագրի կազմակերպությունը, Եվրոատոմը և «Եվրոպական տնտեսական համայնքը», հետագայում հիմնեցին Եվրոպայի արդարադատության դատարանն ու

[3] A European Atomic Energy Community, https://www.cvce.eu/obj/a_european_atomic_energy_community-en-19bc7f11-bea1-49c7-b534-18327c303f41.html

Եվրոպայի խորհրդարանական խորհուրդը (վերջինս 1962թ. վերափոխվեց Եվրոպական խորհրդարանի)։ Այս կառույցները հետագայում հիմք հանդիսացան Եվրամիության ստեղծման համար։

Եվրոատոմն իր առջև խնդիր էր դնում զարգացնել խաղաղ ատոմային էներգիան Եվրոպայի տարածքում, կազմել էներգետիկ ընդհանուր քաղաքականություն, համակարգել այս բնագավառում որոշումների ընդունումը, նվազեցնել էներգակիրների գները, բարձրացնել էլեկտրաէներգիայի մատակարարման կայունությունը, ապահովել ատոմային էներգետիկայի նկատմամբ վերահսկողությունը։ Բացի այդ, այս կառույցի նպատակն էր նպաստել հետազոտական աշխատանքների իրականացմանը միջուկային էներգիայի բնագավառում, կարևորվում էին նաև այդ հետազոտության արդյունքների հրապարակումը և ազատ տարածումը, ինչը նորություն էր, քանի որ ամերիկյան և խորհրդային գիտնականների աշխատանքները չէին հրապարակվում և չէին տարածվում։

Եվրոատոմը նաև հաստատեց ատոմակայանների կառուցման անվտանգության ընդհանուր ստանդարտներ, որոնք պարտադիր էին անդամ բոլոր պետությունների համար։ Կառույցը կարևորում էր նաև միջուկային վառելիքի պատրաստման, մատակարարման և օգտագործման ընդհանուր սկզբունքների ներդնումը։ Ինչպես նշել ենք, պայմանագրի նպատակն էր ընդհանուր շուկայի ստեղծումը, որը կապահովի նաև հատուկ սարքավորումների և գործիքների ընդհանուր արտադրությունը և վաճառքը։ Միասնական շուկան նաև ներդրումների ազատ հոսքի հնարավորություն է տալիս միջուկային էներգիայի բնագավառ, ստեղծվում են մասնագիտական կադրերի պատրաստման ու շարժի հնարավորություններ[4]։

Եվրոատոմի հիմնադիրներն են Ֆրանսիան, Իտալիան, Գերմանիան, Բելգիան, Լյուքսեմբուրգը և Նիդեռլանդները, սակայն հետագայում, Եվրամիության ընդլայնման հետ միասին, ավելացան նաև այս կառույցի անդամները (ներկայում՝ 28 անդամ)։ 2014թ. Եվրոատոմին որպես ասոցացված անդամ միացավ նաև Շվեյցարիան։ 2016-ից այս կառույցի հետ համագործակցում են նաև ԱՄՆ-ը, Հայաստանը, Ճապոնիան, Կանադան, Ավստրալիան, Ղազախստանը, Ուկրաինան, Ուզբեկստանը և Հարավային Աֆրիկան։

2017թ. հունվարին Մեծ Բրիտանիան, հետևելով իր որոշմանը՝ դուրս գալ Եվրամիության կազմից, հայտարարեց, որ դուրս է գալու նաև Եվրոատոմից։ Սակայն մինչ այդ Եվրոատոմին հաջողվեց այդ ոլորտը զարգացնել Եվրոպայում, և այն դարձավ առաջատարն աշխարհում։

[4] European Atomic Energy Community (Euratom) – Structures and tools, http://www.europarl.europa.eu/RegData/etudes/BRIE/2017/608665/EPRS_BRI(2017)608665_EN.pdf

Ներկայում Եվրամիությունում արտադրվող էլեկտրաէներգիայի 30%-ը միջուկային ծագում ունի: ԵՄ անդամ 14 պետություններում կա 130 գործող միջուկային ռեակտոր, որոշ կայաններ փակվել են, իսկ որոշների շահագործման ժամկետը մոտ է ավարտին, սակայն կան նաև կառուցվող կայաններ:

2011թ. Ֆուկուսիմայի (Ճապոնիա) ատոմային կայանի հայտնի աղետից հետո Եվրոատոմը վերանայեց կայանների կառուցման և անվտանգության ստանդարտները, արդյունքում՝ ատոմակայանների արտադրած էլեկտրաէներգիայի գները բարձրացան 25%-ով: Ատոմակայանների «կյանքի» միջին տևողությունը ԵՄ-ում 30 տարի է: Եվրոատոմը ներկայում քննարկում է միջուկային ռեակտորների կյանքի երկարացման հնարավորության հարցը, ինչը ռազմավարական նշանակության խնդիր է անդամ պետությունների համար:

Եվրոատոմը, որը զբաղվում է նաև ատոմային էներգիայի զարգացման և կանխատեսումների հարցերով, կարծում է, որ ապագայում Եվրոպայում միջուկային էներգիայի արտադրությունը շարունակաբար կնվազի՝ մինչև 2050թ. հասնելով ներկա արտադրության 80-88%-ի մակարդակին: ԵՄ անդամ ամեն մի պետություն ինքն է որոշում՝ զարգացնե՞լ միջուկային էներգետիկան իր տարածքում, թե՞ ոչ: Ֆրանսիայում արտադրվող էներգիայի 42%-ը միջուկային է, Շվեդիայում՝ 35%, Սլովակիայում՝ 24% և այլն[5]:

Եվրոպայում միջուկային էներգիայի զարգացման տեմպը որոշակիորեն կանգ առավ Ֆուկուսիմայի աղետից հետո, սակայն, չնայած դրան, ատոմային կայանների կառուցումը ԵՄ-ում, ոչ նախկին տեմպերով, շարունակվում է: Եվրոատոմը համագործակցում է նաև այլ պետությունների հետ՝ կառուցելով միջուկային կայաններ Եվրոպայից դուրս: Ատոմային էներգիայի անվտանգության և միջուկային թափոնների վերամշակման, ինչպես նաև արգելված տեխնոլոգիաների չտարածման խնդիրներով Եվրոատոմը համագործակցում է նաև Միավորված Ազգերի Կազմակերպության համակարգում գործող Ատոմային էներգիայի միջազգային գործակալության հետ:

Նշենք, որ ԵՄ հիմնադիր անդամ հանդիսացող Եվրոատոմը իրավաբանորեն մինչ օրս պահպանել է իր անկախությունը և ԵՄ-ի հետ միասին կարող է կնքել պայմանագրեր, որոնք վերաբերում են Եվրամիության հետ համագործակցության խնդիրներին: Այս տրամաբանությամբ է կնքվել նաև Հայաստանի Հանրապետության հետ փաստացի եռակողմ պայմանագիրը, որով սկսվում է համակողմանի ընդլայնված համագործակցությունը, ինչը ռազմավարական առումով մեծ հեռանկարներ է բացում մեր պետության համար, այդ թվում նաև միջուկային էներգիայի զարգացման բնագավառում:

[5] Նույն տեղում:

ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ԻՐԱՆ-ԻՍՐԱՅԵԼ ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Կարեն Վերանյան[*]

Աշխարհաքաղաքական համատեքստ

ՌԴ, Իրանի և Թուրքիայի ռազմաքաղաքական կոորդինացիոն գործողությունների արդյունքում Սիրիայում իրականացված հակաահաբեկչական պայքարը կարծեք թե նոր հնարավորություններ էր բացում սիրիական ճգնաժամի հանգուցալուծման համար: Տարբեր փորձագիտական գնահատականներով, թեև այդ գործողությունների արդյունքում լուրջ հաջողություններ արձանագրվեցին ահաբեկչության դեմ պայքարում, այդուհանդերձ, չկային բավարար ռազմաքաղաքական, անվտանգային նախադրյալներ՝ խոսելու Սիրիայում և ողջ տարածաշրջանում համապարփակ կայունության հաստատման հնարավորության մասին: Խնդիրը, թերևս, այն է, որ սիրիական ճգնաժամի տարիներին Մերձավոր Արևելքում տեղի է ունենում միջազգային և տարածաշրջանային հիմնական դերակատարների շահերի հարաբերակցության նոր, խորքային վերադասավորման գործընթաց: Մի կողմից, ինչպես նշվեց, Սիրիայում հակաահաբեկչական գործողությունները հիմնականում կոորդինացնում էր Ռուսաստանը՝ Իրանի և Թուրքիայի հետ համատեղ ջանքերով: Մյուս կողմից՝ սիրիական ռազմաքաղաքական գործընթացներում նկատվում էր Վաշինգտոնի ներգրավվածության որոշակի թուլացման միտում, վերջինս ամբողջական մասնակցություն չուներ սիրիական ճգնաժամի հաղթահարման բանակցություններում: Միջազգային փորձագիտական հանրության մի զգալի հատված այն կարծիքին է, որ սիրիական ճգնաժամի ընթացքում Մերձավոր Արևելքում զգալիորեն ընդլայնվել է տարածաշրջանային հիմնական խաղացողների դերակատարությունը, որոնք փորձում են հնարավորինս ինքնուրույն քաղաքականություն վարել: Մասնավորապես, խոսվում է տարածաշրջանում Իրանի ազդեցության ընդլայնման մասին, որը կարողացել է

[*] «Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավար:

Սիրիայում հաստատել իր ռազմաքաղաքական ներկայությունը (ռազմական օբյեկտներ, շտաբներ, հրթիռների և ԱԹՍ-ների պահուստներ և այլն)։ Սա են փաստում նաև Լիբանանում մայիսի 6-ին տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունների արդյունքները (Լիբանանում վերջին անգամ խորհրդարանական ընտրություններ անցկացվել էին 2009թ., 2013 և 2017թթ. հետաձգվել էին՝ սիրիական հակամարտության սրացման հետևանքով). Լիբանանի նորընտիր խորհրդարանում 128 պատգամավորական մանդատների կեսից ավելին՝ 67-ը, կվերցնեն Իրանի աջակցությունը վայելող «Հիզբալլահ» կազմակերպության գլխավորած դաշինքի քաղաքական ուժերը։

Նոր սրացումներ Իրան-Իսրայել հակամարտությունում

Փորձագետները, թերևս, միակարծիք են այն հարցում, որ սիրիական ճգնաժամի ընթացքում Իրան-Իսրայել հակամարտությունը հատում է առճակատման բարձր մակարդակը, նկատվում է Իսրայելի կողմից սիրիական ռազմական գործողություններին ուղղակի միջամտության հաճախակիացման միտում։ Ոչ պաշտոնական աղբյուրների համաձայն, 2013-2018թթ. - մինչև ս.թ. մայիս Սիրիայի ուղղությամբ Իսրայելի պաշտպանության բանակի (ԻՊԲ) ձեռնարկած կամ նրան վերագրվող ռազմական հարվածների վիճակագրությամբ 2013թ. Սիրիայի ուղղությամբ Իսրայելն իրականացրել է 5 հարված, 2014թ.՝ ընդամենը 3-ը։ Ռազմական հարվածների թվաքանակն էապես աճել է 2015-ից սկսած. 2015թ. իրականացվել է 16 ռազմական գործողություն, իսկ 2016 և 2017թթ.՝ համապատասխանաբար՝ 21 և 27։ 2018թ. ապրիլի 30-ի դրությամբ Սիրիայի ուղղությամբ Իսրայելի իրականացրած ռազմական հարվածների քանակը 8 է։

Իրավիճակի կտրուկ սրացումներ արձանագրվեցին նաև իսրայելա-պաղեստինյան դիմակայությունում։ Կողմերի միջև բանակցային գործընթացն արդեն կրում էր ֆորմալ բնույթ։ 2008-2018թթ. փետրվարի 19-ի դրությամբ Գազայի հատվածից Իսրայելի հրթիռակոծումների թվաքանակը կազմում է շուրջ 8448։ Ընդ որում՝ ամենաբարձր ցուցանիշներն արձանագրվել են 2014թ.՝ 3686 հրթիռ, 2012թ.՝ 2078 և 2008թ.՝ 1490 հրթիռ։ Իսրայելական կողմը խոցել է շուրջ 1373 հրթիռ (վիճակագրությունում հաշվի են առնվում Իսրայելի տարածք ընկած հրթիռները)։

Մերձավոր Արևելքում տիրող խիստ անկայուն իրադրությանը նոր լարվածություն հաղորդեցին ԱՄՆ նախագահ Դ.Թրամփի՝ Երուսաղեմն Իսրայել պետության մայրաքաղաք ճանաչելու հայտարարությունն ու ԱՄՆ դեսպանատունը Թել Ավիվից Երուսաղեմ տեղափոխելու Վաշինգտոնի

մտադրությունը, ինչը, մեղմ ասած, միանշանակ չընկալվեց միջազգային հանրությունում, այդ թվում՝ ԵՄ-ում: Ավելին, Վաշինգտոնը պատրաստվում է ներկայացնել այդ հակամարտության կարգավորման մի նոր փաթեթ-քարտեզ, որը Երուսաղեմը Իսրայել պետության մայրաքաղաք հռչակելու Դ.Թրամփի հայտարարության ֆոնին փաստացի արդեն իսկ կարելի է համարել առնվազն խնդրահարույց:

Տարածաշրջանում Իրանի ազդեցության զսպման և Իրան-Իսրայել հակամարտության հավասարակշռության վերականգնման նպատակով իսրայելական կողմն ակտիվ քաղաքական, իրավաքաղաքական աշխատանքներ է իրականացնում՝ միջազգային հանրության ուշադրությունը սևեռելու Մերձավոր Արևելքի իրադրության և հնարավոր մարտահրավերների վրա: Ս.թ. մարտի կեսերին Իսրայելի ղեկավարությունը դիմել էր ՄԱԿ՝ Սիրիայի հետ սահմանի բուֆերային գոտում ՄԱԿ խաղաղապահ զորքերի վերատեղակայման հայցով (ՄԱԿ խաղաղապահ զորքերը լքել էին Գոլանի բարձունքների իրենց դիրքերը՝ Սիրիայի կառավարական ուժերի և գրոհայիններին միջև ռազմական բախումների հետևանքով): Դիմումում մտահոգություն էր հայտնվում, որ Սիրիայի կառավարական զորքերը կարող են վերահսկողության տակ առնել ՄԱԿ իրավասության ներքո գտնվող ապառազմականացված բուֆերային գոտին: Չհապաղեց ՄԱԿ արձագանքը, ըստ որի՝ «խաղաղապահ զորքերը կվերադառնան Սիրիա այն ժամանակ, երբ կարգավորվի իրավիճակն անվտանգության հարցերում»:

Իսրայել-Իրան հակամարտության վերջին զարգացումներում առանձնակի կարևոր էր ս.թ. փետրվարի սկզբին Սիրիայի տարածքից իրանական արտադրության ԱԹՍ-ի Իսրայել ներթափանցման և Իսրայելի ՀՕՊ համակարգերի միջոցով դրա խոցման իրողությունը: Ի պատասխան՝ Իսրայելի ՌՕՈՒ-ն հարվածներ հասցրեց Սիրիայում իրանական ռազմական օբյեկտներին (ԱԹՍ-ների կառավարման համակարգեր): Սիրիական ՀՕՊ համակարգը խոցեց իսրայելական 1 F-16 կործանիչ: Հիշեցնենք, որ նման միջադեպ գրանցվել էր 2017թ. նոյեմբերին, երբ իսրայելական ՀՕՊ համակարգը Գոլանի բարձունքներում ոչնչացրել էր «Հիզբալլահի» արձակած ԱԹՍ-ն, որն, ըստ իսրայելական պաշտոնական աղբյուրների, արտադրվել էր Իրանում: Ավելին, ոչ պաշտոնական տվյալներով, 2018թ. մարտին 5-րդ սերնդի իսրայելական F-35 տեսակի 2 ռմբակոծիչ հայտնվեց Սիրիայի և Իրաքի օդային տարածքում, որոնք հետո հատել են Իրանի օդային սահմանը՝ Բենդեր-Աբասի, Սպահանի, Շիրազի շրջաններում հնարավոր տեղակայված միջուկային օբյեկտների ուղղությամբ հետախուզական օպերացիա իրակա-

նացնելու նպատակով: Տեղեկատվական աղբյուրի համաձայն, իսրայելական ռմբակոծիչները չեն հայտնաբերվել սիրիական, իրանական, ինչպես նաև Սիրիայում գործող ռուսական ռադարների կողմից, ինչն անմիջապես հերքեց ռուսական կողմը: Սույն տեղեկատվությունն ուշագրավ է, եթե փորձենք ուղղակի կապ տեսնել վերջինիս և Սիրիայի տարածքից Իսրայելի օդային տարածք անցած իրանական արտադրության ԱԹՍ խոցման միջադեպի միջև: Իսկ ապրիլի 9-ին Իսրայելի ՌՕՈ-ն գրոհեց Տ-4 ավիաբազայում (Սիրիայի Հոմս նահանգ) գտնվող իրանական ՀՕՊ նորագույն համակարգերը: Նշվում է, որ հրթիռներից միայն երեքն են հասել նպատակին, Սիրիայի ՀՕՊ համակարգերին հաջողվել է խոցել մնացած 5 հրթիռները:

Իրան-Իսրայել հարաբերություններում առկա ռազմաքաղաքական ճգնաժամին զուգահեռ՝ Վաշինգտոնում սկսել են ավելի հաճախ խոսել Սիրիայում ԱՄՆ ուղղակի ռազմական միջամտության անհրաժեշտության մասին: ԱՄՆ ռազմական գործողությունների ձեռնարկման համար հիմք հանդիսացավ Սիրիայի Արևելյան Ղուտա շրջանի խաղաղ բնակչության շրջանում, ըստ ԱՄՆ պաշտոնական տեղեկատվության, Ասադի կողմից քիմիական զենքի կիրառման փաստը, ինչը հերքեցին Սիրիայի և ՌԴ իշխանությունները: Արդյունքում՝ ապրիլի առաջին կեսին ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան ռազմական հարվածներ հասցրին սիրիական այն թիրախներին, որոնք ենթադրաբար կապված են «քիմիական զենք»-ի արտադրության հետ:

Մայիսի կեսին Իսրայելի կառավարությունում բացահայտ հայտարարում էին իսրայելական կողմից Սիրիայի նախագահ Ասադի ֆիզիկական ոչնչացման հնարավորության մասին: Ուշագրավ էր նաև օրերս իսրայելական լրատվամիջոցների տարածած այն տեղեկատվությունը, թե Իրանը նախապատրաստում է հրթիռային հարվածներ հասցնել Իսրայելին՝ վերջինիս կողմից Սիրիայի Տ-4 ավիաբազայի խոցմանն ի պատասխան: Եթե հավելենք նաև Իրանի միջուկային ծրագրի վերաբերյալ Բ.Նեթանյահուի նոր տեղեկությունները, ապա կարող ենք ասել, որ Իսրայելի ղեկավարությունը փորձում է իրավաքաղաքական առումով «լեգիտիմացնել» կամ ապահովագրել իր հնարավոր գործողությունները:

Ելնելով մերձավորարևելյան ռազմաքաղաքական միտումների, Իսրայել-Իրան դիմակայության վերջին սրացումների ընդհանուր տրամաբանությունից՝ անսպասելի չէր Դ.Թրամփի հայտարարությունը, թե Վաշինգտոնը դուրս է գալիս Իրանի հետ միջուկային պայմանագրից, որը հնարավորություն կտար Վաշինգտոնին նոր պատժամիջոցներ սահմանել

Իրանի նկատմամբ. Դ.Թրամփը հայտարարեց Իրանի նկատմամբ «ամենաբարձր մակարդակի» տնտեսական պատժամիջոցներ սահմանելու անհրաժեշտության մասին: Բավական կառուցողական էր պաշտոնական Թեհրանի արձագանքը, ըստ որի՝ Իրանն առժամանակ կշարունակի հավատարիմ մնալ միջուկային համաձայնությանը: Այդ մոտեցման համար կարևոր պայման էր, թերևս, այն, որ ԵՄ-ը նույնպես հայտարարեց միջուկային համաձայնությանը սատարելու պատրաստակամության մասին: Կարող ենք ասել, որ պատժամիջոցները բացասական ազդեցություն կունենան Իրանի տնտեսության վրա, ֆինանսական վնասներ կկրեն Իրանի հետ համագործակցող ընկերությունները, տնտեսական նախագծերը:

Ինչպես սպասվում էր, միջուկային պայմանագրից ամերիկյան կողմի դուրս գալու Վաշինգտոնի հայտարարությունը նոր լարվածություն և մարտահրավերներ կստեղծի տարածաշրջանում. ԻՊԲ տվյալներով, մայիսի 10-ին Սիրիայում գտնվող իրանական ռազմական միավորումները Իսրայել-Սիրիա սահմանում տեղակայված իսրայելական դիրքերի ուղղությամբ արձակեցին շուրջ 20 հրթիռ (ըստ իսրայելական պաշտոնական աղբյուրների՝ խորհրդային արտադրության *«Ураган»* տեսակի ՀԿՌՀ-ից), որոնցից 4-ը խոցվեց «Երկաթյա գմբեթ» ՀՀՊ համակարգով: Ի պատասխան՝ իսրայելական կողմը հրթիռակոծեց Սիրիայի տարածքում ավելի քան 50 թիրախ (մեծ մասամբ Իրանի իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի ուժերի բազաներ, ռազմական շտաբներ և հետախուզական ստորաբաժանումներ):

Աղրբեջանական գործոնն Իսրայել-Իրան հակամարտությունում. նոր իրողություններ

Կարելի է ենթադրել, որ Իրանի հետ միջուկային պայմանագրից ԱՄՆ դուրս գալու Դ.Թրամփի հայտարարության համար զգալի նշանակություն են ունեցել օրերս Իսրայելի վարչապետ Բ.Նեթանյահուի՝ միջազգային հանրությանը ներկայացրած նոր տեղեկություններն Իրանի միջուկային ծրագրի վերաբերյալ. իրանական կողմը միջուկային պայմանագրի ստորագրումից հետո, ըստ իսրայելական պաշտոնական տեղեկատվության, «թաքցրել է իր միջուկային ծրագիրը, շարունակում է իրացնել ուրանի հարստացման ծրագրերը՝ այսպիսով խախտելով միջուկային համաձայնության դրույթները»: Ըստ իսրայելական պաշտոնական աղբյուրների, այս փաստաթղթերը ձեռք են բերվել Իսրայելի հատուկ ծառայությունների հետախուզական գործողությունների արդյունքում: Խորհրդանշական էր նաև Բ.Նեթանյահուի այն հայտարարությունը, որով նա հույս էր հայտնում, որ Դ.Թրամփը «ճիշտ որո-

շում կկայացնի Իրանի հետ միջուկային պայմանագրի հետագա ճակատագրի վերաբերյալ»: Ըստ քուվեյթյան լրատվամիջոցների, վերոնշյալ փաստաթղթերի ձեռքբերման գործում մեծ է եղել Ադրբեջանի դերը: Այն է՝ Իսրայելի արտաքին հետախուզական ծառայությունը դրանք ձեռք է բերել Իրանի տարածքից, այնուհետև դրանք հասցվել են Իրան-Ադրբեջան սահման, որից հետո Ադրբեջանից տեղափոխվել Իսրայել: Այդ առումով, թերևս, խորհրդանշական պետք է համարել այն, որ փաստաթղթերի շուրջ այս աղմուկից առաջ՝ ապրիլի վերջին, Բ.Նեթանյահուն Իսրայել այցելության հրավեր ուղարկեց Ադրբեջանի նախագահ Ի.Ալիևին:

Մեկ անգամ չէ, որ խոսվել է Ադրբեջանի տարածքում Իսրայելի հետախուզական ծառայությունների ակտիվ գործունեության մասին, որոնց հիմնական թիրախը Իրանն է: 2014թ. օգոստոսի 24-ին իրանական պաշտոնական աղբյուրները տեղեկություններ տարածեցին, որ Իրանի իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի հետախուզական ստորաբաժանումները խոցել են իսրայելական արտադրության ԱԹՍ, որը թռիչքներ է իրականացրել Իրանի Նաթանզ միջուկային օբյեկտի շրջակայքում: Կար փորձագիտական տեսակետ, ըստ որի՝ Իրանում խոցված իսրայելական արտադրության *Hermes* տեսակի հետախուզական նշանակության ԱԹՍ-ն կարող էր արձակված լինել Ադրբեջանի տարածքից, մասնավորապես՝ Նախիջևանից:

Որոշ փորձագիտական գնահատականներով, Ադրբեջանի տարածքից իսրայելական հետախուզական ծառայության գործունեության հետ էին կապվում նաև Իրանում նախորդ տարվա դեկտեմբերին սկսված հակաիշխանական ցույցերը: Ըստ այդ սցենարի, Իրանում ցույցերի կազմակերպման և ուղղորդման գործում գործի է դրվել նաև Ադրբեջանում տեղակայված իսրայելական արագ արձագանքման, «գունավոր հեղափոխություններ»-ի կազմակերպման օպերատիվ-մասնագիտական խումբը:

Ադրբեջանի տարածքում Իսրայելի հատուկ ծառայությունների գործունեությունը «հանրայնացվեց» 2016թ. դեկտեմբերին Ադրբեջան Բ.Նեթանյահուի այցելությամբ, որն այդ երկրի արտաքին հետախուզության ծառայության ղեկավար Յոսի Քոհենը որակեց որպես ռազմավարական նշանակության այց: Մասնավորապես, խոսվում էր երկու երկրների միջև անվտանգության ոլորտում համագործակցության հուշագրի ստորագրման մասին, որը նախատեսում է նաև հատուկ ծառայությունների միջև գործակցություն, ահաբեկչության, կրոնական ծայրահեղականության դեմ պայքար, Մոսադի հրահանգիչների ներկայության ապահովում Ադրբեջանում և այլն:

Հետևություններ

- Իսրայել-Իրան հակամարտությունը թևակոխում է նոր ռիսկերի և սպառնալիքների փուլ:
- Իրանի հետ միջուկային պայմանագրից ԱՄՆ դուրս գալը և Վաշինգտոնի կողմից Իրանի նկատմամբ որակապես նոր պատժամիջոցների կիրառումը կնպաստեն Մերձավոր Արևելքում անկայուն իրադրության խորացմանը:
- Հայաստանի համար շարունակում է կարևոր մնալ հարևան Իրանի կայունության և անվտանգության ապահովման հարցը՝ իր ռազմական-անվտանգային և տնտեսական բաղադրիչներով:
- Իրանի նկատմամբ ամերիկյան տնտեսական պատժամիջոցները կարող են բացասական նշանակություն ունենալ ՀՀ տնտեսական քաղաքականության վրա:

ՔՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հայկ Գաբրիելյան[*]

2018թ. ապրիլի 18-ին Թուրքիայի նախագահ, իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցության (ԱԶԿ) նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը «Ազգայնական շարժում» կուսակցության (ԱՇԿ) առաջնորդ Դևլեթ Բահչելիի հետ քննարկումներից հետո հայտարարեց ընթացիկ տարվա հունիսի 24-ին արտահերթ խորհրդարանական և նախագահական ընտրություններ նշանակելու մասին[1]: Ավելի վաղ հաղորդվել էր, որ ընտրություններն անցկացվելու են 2019թ. նոյեմբերի 3-ին (2002թ. նոյեմբերի 3-ի վաղաժամ խորհրդարանական ընտրություններում ԱԶԿ հաղթանակից ուղիղ 17 տարի հետո), ինչից հետո Թուրքիան պետք է անցում կատարի կառավարման նախագահական համակարգի. վերացվելու է վարչապետի պաշտոնը, իսկ նախագահը ստանալու է աննախադեպ լայն լիազորություններ: Սահմանադրական համապատասխան բարեփոխումները հաստատվել են 2017թ. ապրիլի 16-ին անցկացված հանրաքվեի արդյունքներով: Ի դեպ, ԱԶԿ-ն ու ԱՇԿ-ն դաշինք էին կազմել հանրաքվեից առաջ, ինչի հիմքում ընկած են մի շարք գործոններ.

ա) ԱԶԿ-ն ու ԱՇԿ-ն շատ հարցերում (օրինակ՝ քրդերի) ունեն նման դիրքորոշումներ, և շատերը դժվարանում են ասել, թե այժմ նրանցից որն ունի առավել ազգայնամոլական կեցվածք (2018թ. մարտի 10-ին Էրդողանը Մերսինում քաղաքացիների հետ հանդիպման ժամանակ ցույց տվեց «գորշ գայլերի» (ԱՇԿ) հայտնի նշանը)[2]:

բ) Դ.Բահչելին, որը մինչև 2016թ. ռազմական հեղաշրջման փորձը (ՌՀՓ) շարունակ աչքի էր ընկնում Էրդողանին սուր քննադատելով, վերջին շրջանում չի զբաղվում նման գործունեությամբ: Պատճառներից մեկն առաջին կետն է (Էրդողանի դիրքորոշման կոշտացումը ներքաղաքական և արտաքին

[*] Թուրքագետ, ՄԱՀՀԻ ասոցացված փորձագետ:

[1] Cumhurbaşkanı Erdoğan: 24 Haziran'da erken seçim kararı aldık, Sözcü, 18.04.2018.

[2] Cumhurbaşkanı Erdoğan Bozkurt işareti yaptı, Ensonhaber, 10.03.2018.

քաղաքական մի շարք խնդիրների հանդեպ), սակայն կա նաև երկրորդ կետը. ՌՀՓ-ից հետո Թուրքիայում գրանցված զանգվածային բռնությունները վախեցրել են նաև Բահչելիին:

գ) ԱԶԿ-ն ապրիլյան հանրաքվեից առաջ որոշեց չհատել Բահչելիի (ԱՇԿ) սահմանած «կարմիր գիծը». չփոփոխել Սահմանադրության առաջին 4 հոդվածները, որոնք առնչվում են պետության հանրապետական կառուցվածքին, դեմոկրատական, աշխարհիկ, իրավական և սոցիալական բնույթին, տարածքային ամբողջականությանը, պետական դրոշին, լեզվին, մայրաքաղաքին, օրհներգին:

դ) Բահչելին քաջ գիտակցում է, որ իր կուսակցությունը պառակտված է, որ նրա շարքերը սկսել են լքել հազարավոր մարդիկ (4.5 ամսում՝ 2017թ. հոկտեմբերի սկզբից մինչև 2018թ. փետրվարի վերջը, ԱՇԿ շարքերը լքել է 14.341 անդամ[3]), և նման պայմաններում, եթե ԱՇԿ-ն ընտրական դաշինք չձևավորեր ԱԶԿ-ի հետ, ապա առաջիկա խորհրդարանական ընտրություններում, ըստ ամենայնի, չէր կարողանա հաղթահարել 10%-անոց ընտրաշեմն ու հայտնվել խորհրդարանում: Թուրքիայում հասարակական կարծիքն ուսումնասիրող *Konda* ընկերության գլխավոր տնօրեն Բեքիր Ագիրդիրը 2018թ. հունվարին հայտարարեց, որ խորհրդարանում ներկայացված երեք առանցքային կուսակցություն՝ ԱՇԿ, քրդամետ Ժողովուրդների դեմոկրատական կուսակցություն (ԺԴԿ), «Լավ» կուսակցություն, ռիսկի են դիմում՝ խորհրդարանական ընտրություններում չհաղթահարել ընտրաշեմը[4]:

ԱԶԿ և ԱՇԿ ձևավորած Ժողովրդական դաշինքից երկրի նախագահի թեկնածու դարձել է Ռ.Էրդողանը[5]: Ավելի վաղ Դ.Բահչելին հայտարարել էր, որ նախագահական ընտրություններում չի առաջադրվելու և պաշտպանելու է Էրդողանի թեկնածությունը[6]: Ընդդիմադիր հիմնական ուժերն էլ ձևավորել են Ազգային դաշինքը, որի մեջ մտել են Ժողովրդա-հանրապետական, «Լավ», «Երջանկություն», Դեմոկրատական կուսակցությունները (ընդդիմադիր քառյակ): Չնայած դրան՝ նրանք նախագահական ընտրություններին մասնակցելու են իրենց թեկնածուներով. ԺՀԿ-ից երկրի նախագահի թեկնածու է դարձել Մուհարեմ Ինջեն, «Լավ» կուսակցությունից՝ Մերալ Աքշեները, իսկ «Երջանկություն» կուսակցությունից՝ Թեմել Քարամոլաօղլուն:

Այս ամենը վկայում է, որ թե՛ իշխանական, թե՛ ընդդիմադիր ճամբարները հստակեցրել են իրենց ընտրական մարտավարությունը և չեն նախ-

[3] MHP'nin üye sayısında 4.5 ayda 14 bin 341 düşüş, T24, 24.02.2018.
[4] *Հայկ Գաբրիելյան,* Արտահերթ ընտրությունների նշանակումը Թուրքիայում, ՄԱՀՀԻ, 26.04.2018.
[5] Cumhur İttifakı'nın ortak adayı Cumhurbaşkanı Erdoğan, Anadolu Ajansı, 04.05.2018.
[6] Bahçeli: MHP, Cumhurbaşkanlığı adayı göstermeyecektir, NTV, 08.01.2018.

ընտրել իրենց դաշինքներում ներառել քրդամետ ԺԴԿ-ին (քրդերին)։ Ի դեպ, կարելի է հարցին նայել նաև հակառակ կողմից՝ ասելով, որ ԺԴԿ-ն նույնպես չի ցանկացել ընդգրկվել իշխանական և ընդդիմադիր ճամբարներում։ Ինչո՞ւ։

Իշխանական ճամբարի դեպքում առկա են հետևյալ հիմնական գործոնները.

1) Էրդողանը վերջին տարիներին բավական կոշտացրել է «քրդական հարցի» հանդեպ իր դիրքորոշումը։ Նա ոչ մի կերպ չկարողացավ ներել ԺԴԿ-ին՝ 2015թ. խորհրդարանական ընտրություններում ընտրաշեմը հաղթահարելու համար (2015թ. հունիսյան և նոյեմբերյան ընտրություններում ԺԴԿ-ն հավաքել է քվեների 13.12%-ը և 10.76%-ը)։ Ընդ որում՝ դա աննախադեպ էր Թուրքիայի Հանրապետության (ԹՀ) պատմության մեջ՝ քրդամետ (քրդական) կուսակցության կտրվածքով։ Էրդողանը 2015թ. հունիսի 7-ի ընտրություններից առաջ, թերևս, թերագնահատել էր ԺԴԿ-ին, ինչի արդյունքը եղավ այն, որ ԺԴԿ-ն 550 հոգանոց խորհրդարանում ստացավ միանգամից 80 մանդատ։ Դա զգալիորեն նվազեցրեց ԱԶԿ մանդատների թիվը խորհրդարանում, քանի որ այդ կուսակցությունը սովորաբար մեծ թվով քվեներ էր ստանում քրդաբնակ նահանգներում (նախկինում քրդերին առնչվող որոշ բարեփոխումներ անելու, քրդերի շրջանում իսլամական գործոնը խաղարկելու, տնտեսական ցուցանիշների և այլ պատճառներով)։ Արդյունքում՝ 2015թ. հունիսին ԱԶԿ-ն պատմության մեջ առաջին անգամ ստացավ 276-ից պակաս մանդատ (258) և չկարողացավ ձևավորել միակուսակցական կառավարություն։ Թեև դրանից հետո ԺԴԿ-ն արդեն հայտնվեց Էրդողանի թիրախում, երկրում վերսկսվեցին Քրդստանի աշխատավորական կուսակցության (*PKK*) դեմ ռազմական գործողությունները, սակայն ԺԴԿ-ին, թեկուզև որոշակի կորուստներով, նոյեմբերի 1-ի կրկնական ընտրություններում վերստին հաջողվեց հաղթահարել ընտրաշեմը՝ ստանալով արդեն 59 մանդատ։ Այժմ ԺԴԿ-ն Թուրքիայի խորհրդարանում ունի 48 մանդատ. պատգամավորների մի մասին զրկել են անձեռնմխելիությունից և բանտարկել։ Նրանց թվում են հայտնվել նաև ԺԴԿ արդեն նախկին համանախագահներ Սելահաթթին Դեմիրթաշն ու Ֆիգեն Յուքսեքդաղը։ Էրդողանն այդպիսով փորձում է գլխատել ԺԴԿ-ն, թույլ չտալ, որ այս անգամ էլ հաղթահարի ընտրաշեմն ու հայտնվի խորհրդարանում, քանի որ դա զգալիորեն կմեծացնի խորհրդարանում ԱԶԿ մանդատների թիվը (քրդաբնակ նահանգների հաշվին)։ Էրդողանն այս անգամ խաղադրույք է կատարել ազգայնամոլների հետ դաշինքի վրա, և քրդերը, բնականաբար, որևէ ձևով չէին կարող տեղավորվել այդ համատեքստում։

2) Դ.Բահչելին հայտնի է իր հայատյաց ու քրդատյաց հայացքներով և,

բնականաբար, անհնար էր պատկերացնել, որ քրդերն ու ազգայնամոլները կարող էին տեղ զբաղեցնել մեկ դաշինքում: Արդեն նշվեց, որ Էրդողանը քրդերի հարցում սկսել է հետ չմնալ Բահչելիից, իսկ որոշ դեպքերում անգամ գերազանցել է նրան. 2015թ. ամռանը՝ Թուրքիայում *PKK*-ի դեմ ռազմական գործողությունների վերսկսումից հետո, թուրքական մամուլը գրեց, որ ԱՇԿ-ն միայն քննադատում է քրդերին, մինչդեռ ԱԶԿ-ն հարվածում է: Այդպիսով, Էրդողանի և Բահչելիի այդօրինակ դիրքորոշումները վաղօրոք կանխորոշել էին Ժողովրդական դաշինքում ԺԴԿ բացառումը և նաև ԺԴԿ դիրքորոշումն այդ դաշինքի հանդեպ:

Այժմ ներկայացնենք ընդդիմադիր ճամբարին առնչվող հիմնական գործոնները.

1) Ընդդիմադիր ճամբարի կարկառուն ներկայացուցիչներից մեկը դարձել է Թուրքիայի առաջին կին ՆԳՆ նախարար, հայտնի հայատյաց և քրդատյաց, «Լավ» կուսակցության հիմնադիր և առաջնորդ Մ.Աքշեները, որն իր ազգայնամոլական կեցվածքով գերազանցում է անգամ Էրդողանին ու Բահչելիին: Տրամաբանության համաձայն՝ Աքշեներն այդ պատճառով չի կարող հույսեր կապել քրդական ընտրազանգվածի քվեները ստանալու հետ: Ընդդիմադիր ճամբարում (Ազգային դաշինք) նրա ներկայությունն ինքնին բացառում, իմաստազրկում է ԺԴԿ ներկայությունը նրանում:

2) Թեև ԺՀԿ առաջնորդները ներկայում ԺԴԿ-ի (քրդերի) հանդեպ ունեն շատ ավելի մեղմ դիրքորոշում, սակայն դժվար է ասել, թե իշխանության գալու դեպքում ինչպիսին կլինի ԺՀԿ դիրքորոշումը: Նկատենք, որ ԺԴԿ-ն դժգոհ է նրանից, որ ԺՀԿ-ն հանդիպումներ չի ունենում Թուրքիայի ձախ կուսակցությունների, ալևիական բազմաթիվ միությունների հետ, իրեն հեռու է պահում նրանցից: Բացի այդ, այստեղ առկա է պատմական խնդիր. ԹՀ հիմնադիր Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի հիմնած ԺՀԿ կառավարման տարիներին (1923-1950թթ.) քրդերը ենթարկվել են բազում հալածանքների ու ճնշումների: Թեպետ այդ ամենից անցել է մի քանի տասնամյակ, սակայն այդ ամենը խոր հետք է թողել քրդերի հիշողության մեջ:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ թե՛ խորհրդարանական, թե՛ նախագահական ընտրություններում ԺԴԿ-ն մնացել է միայնակ: Ինչպես հայտարարել է քուրդ հանրահայտ քաղաքական գործիչ Ահմեթ Թուրքը, քրդերը մնացել են իշխանական և ընդդիմադիր ճամբարների մեջտեղում, և իրականում դժգոհ են թե՛ ԱԶԿ ճնշումներից, թե՛ ԺՀԿ-ի՝ իրեն հեռու պահելու պահվածքից. «Ընդդիմադիր ուժերը նախ ասում էին, որ պետք է ձևավորվի Ժողովրդավարական ճակատ, սակայն փոխարենը ձևավորում են Ազ-

գային ճակատ՝ մի քանի ազգայնամոլի պատճառով դուրս թողնելով քրդերին: Հասարակական հարցումները վկայում են, որ եթե քրդերը ներկայացված լինեին դաշինքում, ապա այն ընտրություններում կստանար քվեների 53%-ը: Մենք կհաղթահարենք 10%-անոց ընտրաշեմը: Քրդերը պատրաստ են աջակցել ժողովրդավարական Թուրքիա կառուցել պատրաստվող ուժի: Թուրքիայի ժողովրդավարացումը չի կարող տեղի ունենալ առանց քրդերին, ինչպես նաև Թուրքիայի մյուս ժողովուրդներին հաշվի առնելու»[7]:

ԺԴԿ համանախագահ Փերվին Բուլդանն էլ ընդգծել է, որ իր կուսակցությունը չի վախենում արտահերթ ընտրություններից. «Եթե դուք որոշում եք ընդունել արտահերթ ընտրություններ նշանակելու մասին, ապա մենք՝ ԺԴԿ-ն, կասենք՝ «Եկե՛ք»: Մենք պատրաստ ենք ընտրություններին: Եկել է ԱԶԿ-ն հուղարկավորելու և նրա կառավարմանը վերջ դնելու ժամանակը: Ընտրությունները հիանալի հնարավորություն են դրա համար»[8]: ԺԴԿ մյուս համանախագահ Սեզաի Թեմելին իր հերթին հայտարարել է. «Մենք խուճապի մեջ չենք: Ինչպես և նախկինում, այսուհետ նույնպես պայքարելու ենք ժողովրդավարության համար: 2018թ. ռազմավարական տարի է: Թուրքիան ներկայում գտնվում է խոր ճգնաժամի մեջ, և ոչ միայն տնտեսական: Երկիրը գլորվում է դեպի քաղաքական, տնտեսական և իրավական ճգնաժամ, որը մենք բոլորս դիտարկում ենք արդեն ոչ մեկ տարի»[9]:

Չնայած ԺԴԿ ղեկավարության նման հայտարարություններին և ապրիլի 20-ին ընտրական մոբիլիզացիա հայտարարելուն[10]՝ ակնհայտ է, որ կուսակցությունն ընտրություններին մոտենում է ոչ լավ վիճակում: Արդեն նշվեց, որ ԺԴԿ մոտ մեկ տասնյակ պատգամավորներ, ներառյալ կուսակցության առաջնորդները, զրկվել են անձեռնմխելիությունից և բանտարկվել (ընդ որում՝ այդ թիվն աճելու միտում ունի. պատգամավորական անձեռնմխելիությունից կարող է զրկվել նաև Գարո Փայլանը): Բացի այդ, պաշտոնանկ են արվել ԺԴԿ-ն ներկայացնող մի շարք քաղաքապետեր: Այս ամենին հավելենք նաև այն, որ իշխանություններն ընդամենը երկու ամիս առաջ են հայտարարել արտահերթ ընտրությունների մասին, և ԺԴԿ-ին կարճ ժամանակ է մնացել դրանց պատշաճ մոտենալու համար: Կարևոր գործոն է նաև այն, որ ընտրություններն անցկացվելու են արտակարգ դրության ռեժիմի պայմաններում: Շատերի պնդմամբ, անհնար է նման պայմաններում արդար ընտրություններ անցկացնելը: Բնականաբար, Էրդողանն ամեն ինչ

[7] Ahmet Türk seçim sürecini değerlendirdi, Demokrat Haber, 09.05.2018.
[8] HDP Eş Genel Başkanı Buldan'dan erken seçim yanıtı, Evrensel.net, 17.04.2018.
[9] HDP: Erken değil panik seçim, Sputnik Türkiye, 18.04.2018.
[10] Buldan: 24 Haziran için bugünden itibaren seferberlik ilan ediyoruz, Gazete Karınca, 20.04.2018.

անելու է, որպեսզի հունիսի 24-ի ընտրություններում ԺԴԿ-ն չհաղթահարի ընտրաշեմը, ինչը կմեծացնի ԱԶԿ մանդատների քանակը: Թուրքական մամուլը գրել է, որ եթե ԱԶԿ-ն խորհրդարանական ընտրությունների արդյունքներով ստանա 300-ից պակաս մանդատ, ապա Էրդողանը գնալու է նոր ընտրությունների անցկացմանը (ինչպես արեց 2015թ.)[11]:

Ակնհայտ է, որ ԺԴԿ-ն չունի արտահերթ ընտրություններում հաղթելու որևէ հնարավորություն: Ամեն դեպքում, ԺԴԿ ներկայացուցիչները վստահ են, որ կուսակցությանն այս անգամ էլ կհաջողվի հաղթահարել ընտրաշեմն ու ընդգրկվել խորհրդարանում: Չենք բացառում, որ ԺԴԿ-ն վերստին կհայտնվի խորհրդարանում: Այդ հարցում ԺԴԿ-ին կարող է օգնության գալ նույն ԱԶԿ-ԱՇԿ դաշինքը, ինչը տրամաբանորեն պետք է խստապես մտահոգի Թուրքիայի քրդերին: ԱԶԿ-ն, որը սովորաբար մեծ թվով քվեներ էր հավաքում արևելյան և հարավարևելյան քրդաբնակ նահանգներում, ԱՇԿ-ի հետ դաշինք կազմելու պատճառով ռիսկի է դիմում կորցնել այդ քվեները: Իսկ դա հնարավորություն կդառնա ԺԴԿ-ի համար, որպեսզի նա ստանա այդ քվեներն ու հաղթահարի ընտրաշեմը: Ավելին, ԺԴԿ-ի կողմից ընտրաշեմը հաղթահարելը (ԱԶԿ մանդատների նվազելը) ձեռնտու կլինի նաև ընդդիմադիր քառյակին: Թեև քրդերի զգալի մասը նախկինում իր քվեն տվել է Էրդողանին ու ԱԶԿ-ին, սակայն այս անգամ իրավիճակն այլ է. ա) Էրդողանը վաղուց ձախողել է «քրդական բարեփոխումների» հարցը, որոնք այլևս օրակարգում չեն (Էրդողանն անգամ չի ընդունում, որ Թուրքիայում գոյություն ունի «քրդական հարց»), բ) 2015թ. ամռանն Էրդողանը, առաջնորդվելով ընտրական դրդապատճառներով, վերսկսել է *PKK*-ի դեմ պատերազմը, գ) ԹՀ պատմության մեջ առաջին անգամ (2015թ.) ԹԱՄԺ անցած քրդամետ կուսակցությունը՝ ԺԴԿ-ն, հայտնվել է Էրդողանի թիրախում, դ) Էրդողանը դաշինքի մեջ է մտել Բահչելիի հետ, որը մշտապես խստապես քննադատել է քրդերին, ե) Էրդողանն իր ուրույն դերն է ունեցել 2017թ. Հյուսիսային Իրաքի քրդական ինքնավարության անկախության հանրաքվեի արդյունքների գործարկման խափանման հարցում, զ) վերջին շրջանում Էրդողանը պատժիչ գործողություններ է սկսել Սիրիայի քրդերի դեմ, որոնցից վերջինը «Ձիթենու ճյուղ» գործողությունն էր, է) Էրդողանը շարունակում է երկրի քրդաբնակ նահանգների ժողովրդագրական պատկերը փոխելու իր քաղաքականությունը, ը) Էրդողանը շարունակում է քրդաբնակ նահանգներում կենսամակարդակի կտրուկ բարձրացմանը միտված լուրջ ներդրումներ չանելու իր քաղաքականությունը:

[11] Erdoğan kazanana kadar seçimler yenilenecek, Odatv.com, 02.05.2018.

Ինչ վերաբերում է նախագահական ընտրություններին, ապա ԺԴԿ-ից երկրի նախագահի թեկնածու վերստին դարձել է Ս.Դեմիրթաշը, որը 2016թ. նոյեմբերից գտնվում է կալանքի տակ (նրա նկատմամբ հարուցվել են մի շարք քրեական գործեր՝ «ահաբեկչությանն աջակցելու», «Թուրքիայի կառավարությանը վիրավորելու» համար)[12]: Դրա հետ կապված՝ մայիսի 5-ին Մ.Ինջեն Էրդողանին կոչ արեց Դեմիրթաշին չպահել բանտում և ընտրություններում մրցել տղամարդավարի[13]: Ամեն դեպքում, մեծ ակնկալիքներ չկան, որ Դեմիրթաշը կկարողանա մոտ ժամանակներս դուրս գալ բանտից: Հիշեցնենք, որ 2014թ. նախագահական ընտրություններում ԺԴԿ թեկնածու Ս.Դեմիրթաշը հավաքել է քվեների 9.76%-ը: Այդ պատճառով Էրդողանը մոտ էր նախագահական ընտրությունների առաջին փուլում չհաղթելուն (նա ստացավ քվեների 51,7%-ը): Այժմ իրավիճակը կարող է կրկնվել. Դեմիրթաշի հեղինակությունը բավական բարձր է քրդերի շրջանում, հենց նրա առաջնորդությամբ է ԺԴԿ-ն 2015թ. երկու անգամ հաղթահարել ընտրաշեմը՝ առաջին դեպքում ավելի քան 13% ցուցանիշով, ինչն աննախադեպ արդյունք է: Ա.Թուրքի խոսքերով՝ Դեմիրթաշը նախագահական այս ընտրություններում կարող է ստանալ քվեների մոտ 15%-ը[14]: Դա նշանակում է, որ Դեմիրթաշի թեկնածության առաջադրումը կարող է լրջորեն խոչընդոտել, որպեսզի Էրդողանը չկարողանա հաղթել նախագահական ընտրությունների առաջին փուլում: Եթե նշանակվի նախագահական ընտրությունների երկրորդ փուլ, ապա քրդերի քվեները նույնպես կլինեն բավական կարևոր. եթե նրանք նախընտրեն բոյկոտել նախագահական ընտրությունների երկրորդ փուլը, ապա դա ձեռնտու կլինի միայն Էրդողանին: Այդ պատճառով էլ ընդդիմադիր քառյակը պետք է փորձի եթե ոչ այս, ապա գոնե այդ փուլում իր կողմը գրավել քրդերին: Բնականաբար, Մ.Ինջեի հնարավորություններն այդ համատեքստում շատ ավելի մեծ են, քան, ասենք, Մ.Աքշեներինը: Ի դեպ, Մ.Ինջեն Էդիրնեի բանտում արդեն տեսակցել է Դեմիրթաշին[15]:

Այսպիսով, 2018-ը Թուրքիայի համար լինելու է վճռական տարի. հունիսի 24-ի արտահերթ ընտրությունների արդյունքները կկանխորոշեն, թե Թուրքիայի համար ինչպիսին կլինի 2018-ը՝ բռնապետությա՞ն, թե՞ ժողովրդավարության տարի: Նախագահական և խորհրդարանական արտահերթ ընտրություններում քուրդ ընտրազանգվածի ձայնը կարող է լինել

[12] HDP'nin Cumhurbaşkanı adayı Selahattin Demirtaş oldu, TRT Haber, 04.05.2018.
[13] İnce'den Erdoğan'a çağrı: Demirtaş'ı hapiste tutma, gel erkekçe yarışalım, Diken, 05.05.2018.
[14] Ahmet Türk Selahattin Demirtaş'ın oy oranını açıkladı!, Internet Haber, 08.05.2018.
[15] CHP's candidate İnce will visit jailed HDP candidate Demirtaş, Ahval, 06.05.2018.

վճռորոշ։ Ընդ որում՝ այն կարող է վճռորոշ լինել թե՛ հենց իր՝ ԺԴԿ-ի, թե՛ իշխանական, թե՛ ընդդիմադիր ճամբարների համար։ Այս համատեքստում ԺԴԿ ղեկավարությանը լուրջ աշխատանք է սպասվում առաջիկայում, որպեսզի փորձի հնարավորինս համախմբել քրդական ընտրազանգվածը։ Թեպետ դա բավական բարդ գործընթաց է, ամեն դեպքում իրենց կեցվածքով դրա համար պարարտ հող են ստեղծել իշխանական ու ընդդիմադիր ճամբարները՝ նախընտրելով (գոնե այս փուլում) քրդերին դուրս թողնել իրենց շարքերից։ Ինչպես հայտարարել է Ա.Թուրքը, քրդերն իրենք պետք է ապահովագրեն իրենց և նպաստեն նրան, որ ԺԴԿ-ն վերստին հաղթահարի 10%-անոց ընտրաշեմը և ներկայացված լինի Թուրքիայի խորհրդարանում։

ՈՒՂԻՂ ԵԹԵՐՆԵՐԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ
(Ինչպես ձևափոխվեց տեղեկատվական դաշտը)

Սամվել Մարտիրոսյան[*]

ՀՀ-ում թավշյա հեղափոխության ընթացքում սոցիալական մեդիաներն ունեցան ամենակարևոր դերերից մեկը: Հիմնական հաղորդակցամիջոցը ավանդական ԶԼՄ-ից տեղափոխվեց դեպի նորագույն տեխնոլոգիաներ, ուղիղ եթերներ սոցիալական հարթակներում: Նույնիսկ օնլայն լրատվականներն այդքան մեծ ազդեցություն չունեցան տվյալ ժամանակահատվածում:

Բնականաբար, Հայաստանի թիվ 1 սոցիալական ցանցը՝ Ֆեյսբուքը, որն ունի ամենամեծ լսարանը, ամենահիմնական հարթակն էր, որտեղ ծավալվում էին քննարկումները և տարածվում էին նյութերը: Ավելին, վերջին ամսվա ընթացքում հայաստանյան Ֆեյսբուքի լսարանը մոտ 10% աճ ունեցավ. 1 մլն 100 հազ. ակտիվ օգտատերից մինչև 1 մլն 200 հազ. ակտիվ օգտատեր[1]:

Ինչպես հետևում է, օրինակ, հոդվածի հեղինակի Թվիթերի հաշվի (https://twitter.com/Kornelij) այցելությունների դինամիկայից, ապրիլի 15-ից հետո նկատվում է գրառումների դիտումների կտրուկ աճ (տե՛ս *Նկար 1*).

Նկար 1



[*] «Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական կենտրոնի փորձագետ:

[1] Ֆեյսբուքի գովազդային հարթակի տրամադրած տվյալներն են:

Գերակտիվ էր նաև Ինստագրամը: Այստեղ լսարանը հասնում է ֆեյսբուքյան լսարանի կեսին. 560 հազ. ակտիվ օգտատեր: Սակայն այս լսարանն ավելի երիտասարդ է, մոտ 80%-ը կազմում են մինչև 35 տարեկան երիտասարդները:

Կտրուկ ավելացել էր նաև Թվիթերի լսարանը. սոցցանցի յուրահատկություններից մեկն այն է, որ հարթակն ավելի բաց է որոնումների համար, և ընթերցողների զգալի մասն արտասահմանցիներ են, որոնց հետաքրքրում է Հայաստանի ներքաղաքական կյանքը (տե՛ս *Նկար 1, 2*):

Նկար 2

Թվիթերում #Armenia հեշթեգի կիրառման կտրուկ աճը ապրիլի կեսից, ըստ hachtagify.me



Սակայն ամենահեղափոխականը տեղեկատվական հոսքերում ուղիղ եթերների գերակշռումն էր: Հիմնական լսարանը միտված էր օգտվելու Ֆեյսբուքի և Յութուբի ուղիղ եթերներից:

Որպես հետևանք՝ ինտերնետ կապը ծայրահեղ ծանրաբեռնված է աշխատել, սպառումը, ըստ պրովայդերների, գերազանցել է բնական վիճակի 300%-ը. «Թրաֆիկի ծավալների նման կտրուկ աճին տեխնիկապես որևէ ցանց պատրաստ չէ: Սովորաբար ցանցի և կապուղիների պլանավորումը կատարվում է թրաֆիկի օրինաչափ ծավալներից մոտ 20-30% ավելի ռեզերվային թողունակությունն ապահովելու հաշվարկով: Իսկ վերջին օրերին թրաֆիկի պահանջարկն ավելացել է ոչ թե 20, 30 կամ 50, այլ միջինը մոտ 300%-ով»[2]:

[2] Հայաստանում ապրիլի 13-ից արձանագրվել է ինտերնետային թրաֆիկի սպառման կտրուկ աճ, https://www.azatutyun.am/a/29206587.html

Հիմնական լրատվամիջոցները, որոնք իրականացրել են ուղիղ եթերներ ապրիլ-մայիսի ընթացքում, իրենց ողջ պատմության մեջ ամենադիտված տեսանյութերն են արձանագրել այդ ժամանակահատվածում (տե՛ս *Նկար 3-5*).

Նկար 3

«Ազատության» ամենադիտված տեսանյութերը Յութուբում ապրիլ-մայիսի ուղիղ եթերներն են



Նկար 4

Para.tv-ի ամենադիտված տեսանյութերը Յութուբում ապրիլ-մայիսի ուղիղ եթերներն են։



Նկար 5

Factor.am-ի ամենադիտված տեսանյութերը Յութուբում ապրիլ-մայիսի ուղիղ եթերներն են



Նկար 6

Նիկոլ Փաշինյանի ֆեյսբուքյան էջը Հայաստանում ամենաարագ աճողն էր նոր ընթերցողների թվի ավելացման տեսանկյունից: Ըստ Socialbakers.com

Ինչ վերաբերում է ֆեյսբուքյան ուղիղ եթերներին, ապա այս գործիքն օգտագործվում էր բազմաթիվ քաղաքացիների կողմից: Իհարկե, ամենաազդեցիկ ֆեյսբուքյան էջն այս ընթացքում Նիկոլ Փաշինյանինն էր (տե՛ս *Նկար 6*):

Ավելին, Փաշինյանի ուղիղ եթերները ռեկորդային դիտումներ էին գրանցում Հայաստանի համար: Նորանշանակ վարչապետի ուղիղ եթերը

Բաղրամյան 26-ից դիտվել է մեկ միլիոն անգամ, ինչը հայաստանյան Ֆեյսբուքի հատվածի համար աննախադեպ է (տե՛ս *Նկար 7*):

Թավշյա հեղափոխությունը նոր ձևաչափեր ստեղծեց Հայաստանի սոցիալական մեդիաների, ինչպես նաև ընդհանուր տեղեկատվական դաշտում, ինչի հետևանքներն ավելի ցայտուն կերևան մոտ ապագայում, երբ նոր մոտեցումները դառնան առօրեական:

Նկար 7

Նիկոլ Փաշինյանի ֆեյսբուքյան էջի նոր ուղիղ եթերների դիտումների ռեկորդային քանակը

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ

Վահրամ Հովյան[*]

Հայրենադարձների ինտեգրումն ունի երկու հիմնական հարթություն՝ սոցիալ-տնտեսական և հոգևոր-քաղաքակրթական։ Քանի որ սփյուռքը բազմաշերտ հանրություն է, նրա տարբեր շերտեր ներկայացնող հայրենադարձների խմբերի պարագայում ինտեգրման խնդիրների առաջնահերթությունները նույնպես կարող են տարբեր լինել։ Այլ կերպ ասած՝ գերակայությունն այդ հարցում կարող է պատկանել հիշյալ հարթություններից մեկին։

Հայրենադարձների ինտեգրման խնդիրը դիտարկելիս կարևորություն է ստանում սփյուռքի համայնքների շերտավորումը կամ դասակարգումը հատկապես հետևյալ երկու չափանիշներով՝ ազգային ինքնության պահպանման աստիճանը և սփյուռքում հայտնվելու ժամանակը։ Առաջին չափանիշով սփյուռքը դասակարգվում է երկու հիմնական շերտի՝ ա) ինքնության պահպանման համեմատաբար բարձր մակարդակում գտնվող համայնքներ, որոնք կազմում են հիմնականում Մերձավոր և Միջին Արևելքի հայկական սփյուռքը և բ) ինքնության պահպանման համեմատաբար ցածր մակարդակ ունեցող (ավելի շատ ձուլման ենթարկված) համայնքներ, որոնք հիմնականում կազմում են Արևմտյան աշխարհի (Ամերիկա, Արևմտյան Եվրոպա) հայկական սփյուռքը։

Երկրորդ չափանիշով դասակարգելու պարագայում սփյուռքը կրկին բաժանվում է երկու շերտի՝ ա) ավանդական սփյուռք, որը ձևավորվել է հիմնականում ցեղասպանության հետևանքով և որի ներկայացուցիչները ներկայում հանդիսանում են սփյուռքի չորրորդ և հինգերորդ սերունդները, բ) ժամանակակից սփյուռք, որը կազմում են հետխորհրդային շրջանում Հայաստանից արտագաղթածները։ Ավանդական սփյուռքի պարագայում ինքնության պահպանման խնդիրն ավելի սուր է հատկապես այն հատ-

[*] «Նորավանք» ԳԿՀ Գիտական-փորձագիտական խորհրդի քարտուղար, Հայագիտական կենտրոնի ավագ փորձագետ։

վածում, որը գտնվում է Արևմտյան աշխարհում: Չորրորդ-հինգերորդ սերնդի ամերիկահայերի կամ ֆրանսահայերի պարագայում ձուլման ծավալները և աստիճանն անհամեմատ ավելի մեծ են: Ինչ վերաբերում է ժամանակակից սփյուռքին, ապա, չնայած այս շերտի պարագայում էլ ձուլման (հատկապես՝ լեզվի կորստի) տեմպերն ահագնացող են, այնուամենայնիվ, քանի որ վերջինիս ներկայացուցիչները կազմում են այս հատվածի առաջին կամ երկրորդ սերունդը, ապա նրանց մեջ, կարելի է ասել, դեռևս բարձր է հայկականության պահպանման աստիճանը:

Դիտարկելով վերոհիշյալ շերտերը՝ կարող ենք տալ վերջիններիս ավելի ամբողջական (ինտեգրալ) դասակարգումը՝ հիմնվելով մեկ այլ չափանիշի՝ հայրենադարձության հավանականության վրա, այն է՝ որոշել, թե այդ հատվածներից յուրաքանչյուրի պարագայում որքան իրատեսական է հայրենադարձությունը: Այսպես, հայրենադարձության հավանականությունը պայմանականորեն կարող է ունենալ երեք աստիճան.

1. ***Բարձր:*** Այս աստիճանն ունեն սփյուռքի այն համայնքները, որոնք գտնվում են անկայուն և պատերազմական գոտիներում և, հետևաբար, կանգնած են ֆիզիկական գոյության պահպանման մարտահրավերների առջև: Հայկական սփյուռքի պարագայում դրանք հիմնականում Մերձավոր և Միջին Արևելքի հայ համայնքներն են: Ինչպես ցույց է տվել Լիբանանի քաղաքացիական պատերազմի (1975-1990թթ), Ծոցի երկրորդ պատերազմի (2003), սիրիական ճգնաժամի (2011-ից ի վեր) փորձը, այս տարածաշրջանի սփյուռքում տարերային հայրենադարձության հավանականությունը բարձր է:
2. ***Միջին:*** Այս շերտը կազմում են հիմնականում ժամանակակից սփյուռքի ներկայացուցիչները, որոնցից շատերը, Հայաստանից արտագաղթելով (դեպի Ռուսաստան, հետխորհրդային այլ երկրներ, Եվրոպա, ԱՄՆ և այլն), շարունակում են պահպանել իրենց քաղաքացիությունը, շարժական և անշարժ գույքը, ունեն հարազատներ և բարեկամներ հայրենիքում և պահպանում են կապերը նրանց հետ: Քանի որ հետխորհրդային շրջանում արտագաղթի պատճառներ են ցածր կենսամակարդակն ու գործազրկությունը, հանրապետությունում սոցիալ-տնտեսական ցուցանիշների հնարավոր բարելավումը ենթադրաբար կարող է հանգեցնել սփյուռքի այս հատվածի զոնե մի մասի հայրենադարձությանը:
3. ***Ցածր:*** Հայրենադարձության հավանականությունը ցածր է հիմնականում Արևմտյան աշխարհի ավանդական սփյուռքի ներկայացուցիչների մեջ, որոնք գլխավորապես ունեն բարձր կյանքի որակ և ապրում են

բարեկեցիկ: Այս շերտի սահմանափակ քանակությամբ ներկայացուցիչներ, ելնելով հայրենասիրական ռոմանտիզմից, կարող են բռնել հայրենադարձության ճամփան:

Քանի որ հայրենադարձության հավանականությունն ամենաբարձրն է գնահատվում Մերձավոր և Միջին Արևելքի հայ համայնքների պարագայում, ինտեգրման խնդիրներն էլ առայժմ նպատակահարմար է դիտարկել այդ շերտի օրինակով: Այս տարածաշրջանից հայրենադարձների պարագայում ինտեգրման խնդիրներն ունեն հիմնականում սոցիալ-տնտեսական և սկզբնական շրջանում՝ որոշակիորեն կենցաղային բնույթ: Քաղաքակրթական խնդիրներ, կարելի է ասել, գրեթե չկան: Հոգևոր-մշակութային առումով անհամատեղելի կամ օտար հանրույթների՝ միմյանց հարմարեցման խնդիր չէ հայ հասարակության մեջ հայրենադարձների ինտեգրումը: Որքան էլ տարբեր, այնուամենայնիվ, թե՛ տեղի հայությունը և թե՛ հայրենադարձները, միևնույն՝ հայկական քաղաքակրթության կրողներն են, ունեն միևնույն հոգևոր-մշակութային արժեհամակարգը:

Հայրենադարձների ինտեգրման հարցում որոշակի խոչընդոտներ կային խորհրդային տարիներին, որոնք բխում էին վարչակարգի առանձնահատկություններից: Խորհրդային երկրում տիրում էին այլ կարգեր և պետական քաղաքականություն, քան այն երկրներում, որտեղից գալիս էին հայրենադարձները, ինչի արդյունքում գոնե սկզբնական շրջանում որոշակի աններդաշնակության կամ խորթության զգացում կար վերջիններիս մեջ: Այդ ժամանակահատվածում սփյուռքահայերի ինտեգրման հարցում բարդություններ առաջացնող գործոններն էին.

- *Պետական մակարդակով հռչակված կոմունիզմի գաղափարախոսությունը և դրա պարտադրման քաղաքականությունը:* Խորհրդային երկիրը վարում էր իր քաղաքացիների մեջ համայնավարական արժեքների արմատավորման քաղաքականություն, որից զերծ չէին մնում նաև հայրենադարձները: «Այդ նպատակով կազմակերպվում էին քաղպարապմունքներ, հատուկ դասընթացներ՝ նորեկներին կոմունիստական ոգով դաստիարակելու և մարքսիզմ-լենինիզմի ուսմունքին ծանոթացնելու»[1]: Վերջիններս, որոնց համար խորթ էր այդ գաղափարախոսությունը, իսկ դրա ուսուցումը՝ անհասկանալի, հաճախ խուսա-

[1] *Ստեփանյան Ա.,* 1946-1948թթ. հայրենադարձության ինտեգրման և ադապտացման խնդիրները, «1946-1948թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր» համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., Լիմուշ, 2009, էջ 157-158:

փում էին այդ պարապմունքներից, որի համար էլ արժանանում էին պատիժների: Խորհրդային համայնավարությունը որոշակիորեն խորթ էր նաև այն հայրենադարձների համար, որոնք նույնպես սփյուռքում եղել էին համայնավար: Վերջիններիս պատկերացրած համայնավարությունը տարբերվում էր Խորհրդային Հայաստանում եղածից: Մի համայնավար հայրենադարձի բնորոշմամբ. «Մեր գիտցած կոմունիստը բոլորովին տարբեր է...»[2]:

- *Կրոնի գործոնը*: Խորհրդային Միությունը կրոնի հարցում պաշտոնապես վարում էր աթեիզմի քաղաքականություն: Մինչդեռ հայրենադարձներն աչքի էին ընկնում խոր քրիստոնեական հավատով: Նրանք կիրակի օրերին եկեղեցի էին գնում, ինչը «...ներկայացվում էր որպես տգիտության դրսևորում»[3]: Պաշտոնական աթեիզմն իր բացասական հետևանքներն էր թողնում նաև ազգային ավանդույթների և ծեսերի վրա, որոնք կապված էին հատկապես եկեղեցու հետ: Հայրենադարձները, որոնք սփյուռքում ամուր կառչած էին ազգային սովորույթներին, «զարմանում էին, թե ինչպես կարելի է առանց եկեղեցու ամուսնանալ, առանց քահանայի հանգուցյալին հուղարկավորել կամ երեխային չմկրտել»[4]: Իսկ տեսնելով Մարքսի, Էնգելսի, Լենինի և Ստալինի նկարները հիմնարկ-գրասենյակների պատերին՝ երկյուղով հարց էին տալիս. «Մեղա՛, ասոնք ալ տեղացիներո՞ւն սուրբերն են»[5]:
- *Ցեղասպանության հիշողության գործոնը:* Խորհրդային Հայաստանում մինչև 1960-ական թվականները ցեղասպանության խնդիրը հիմնականում համարվում էր փակ թեմա: Այդ հարցի լայն արծարծումը չէր խրախուսվում, ինչը նույնպես որոշակի աններդաշնակության զգացում էր առաջացնում հայրենադարձների շրջանում, քանի որ նրանց «...հոգևոր արժեքներում կարևոր տեղ ուներ ցեղասպանության հիշողությունը...»[6]:

Հետխորհրդային շրջանում վերոհիշյալ խոչընդոտները հաղթահարված են, ինչն ավելի լայն դուռ է բացում հայաստանյան հասարակության և հայրենադարձների հոգևոր-մշակութային փոխներթափանցման համար: Բացի ընդհանուր ծագումից և պատմությունից, Հայաստանի հայության և սփյուռքի

[2] *Բազարյան Մ.,* Նամակներ «սովետական դրախտից», Եր., 1989, էջ 47: Հղումը՝ ըստ *Ստեփանյան Ա.,* նշվ. աշխ., էջ 158 :
[3] *Մեսրոպյան Հ.,* Հայրենադարձությունը և լեզվական փոխըմբռնման խնդիրը, «1946-1948թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր» համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., Լիմուշ, 2009, էջ 181:
[4] *Ստեփանյան Ա.,* նշվ. աշխ., էջ 160:
[5] Նույն տեղում:
[6] Նույն տեղում:

հայության միասնական քաղաքակրթական հենքի ապահովմանը տասնամյակներ շարունակ (ինչպես խորհրդային, այնպես էլ հետխորհրդային տարիներին) նպաստել և նպաստում է այդ ուղղությամբ Հայաստանի վարած պետական քաղաքականությունը: Վերջինիս կարևոր գործիքներից են.

- *Հայաստանի դպրոցական կրթական համակարգը:* Հայաստանյան դպրոցներում աշակերտները «Հայ գրականություն» առարկայի շրջանակներում հաղորդակցվում են նաև արևմտահայ, ինչպես նաև սփյուռքահայ գրականությանը: Ասել է թե՝ ուսումնական հաստատություններում հաղորդակցվելով արևմտահայ և սփյուռքահայ քաղաքակրթությանն ու մշակույթին՝ հայաստանաբնակ հայությունը յուրացնում է այն, ինչը լուրջ նախադրյալ է սփյուռքահայության հետ հարաբերություններում միասնական քաղաքակրթական և մշակութային հենքի ապահովման համար:
- *Հրատարակությունները:* Հայաստանում հրատարակվել և հրատարակվում են ինչպես արևմտահայ, այնպես էլ սփյուռքահայ դասական և ժամանակակից գրողների ստեղծագործությունները, որի արդյունքում արևմտահայերենը և դրանով ստեղծված գրականությունը դառնում են հայաստանյան հասարակության սեփականությունը՝ գոնե ընթերցող շրջանակների համար: Այս տեսակետից կարելի է առանձնացնել ՀՀ Սփյուռքի նախարարության հովանավորությամբ ՀՀ ԳԱԱ Գրականության ինստիտուտի կողմից հրատարակվող «Գրական սփյուռք» տարեգիրքը, որտեղ տպագրվում են ժամանակակից սփյուռքահայ գրողների ստեղծագործությունները:
- *Ակադեմիական հաստատությունների գործունեությունը:* Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում և ակադեմիական կառույցներում նույնպես ուսումնասիրվում և դասավանդվում են արևմտահայերենը և արևմտահայ գրականությունը:
- *Արվեստը և մշակույթը:* Արևմտահայերեն թատրոնը, ֆիլմերը և այլն զգալիորեն նպաստում են արևմտահայ և արևելահայ քաղաքակրթությունների փոխներթափանցմանը:
- *Օրենսդրությունը լեզվի բնագավառում:* Լեզվի մասին ՀՀ օրենքը, արձանագրելով, որ ՀՀ-ում պետական լեզուն գրական հայերենն է, «...չի սահմանազատում պատմական ճակատագրով երկփեղկված մեր ժողովրդի գրական երկու լեզուները, և հավասար արտոնություններ է ընձեռում և՛ արևելահայերենին, և՛ արևմտահայերենին»[7]:

[7] *Մեսրոպյան Հ.,* նշվ. աշխ., էջ 178:

Սփյուռքահայությունն իր հերթին, հատկապես Մերձավոր և Միջին Արևելքի հայությունը, ինչպես վերը նշվեց, որքան էլ ենթարկված լինի օտար քաղաքակրթական և մշակութային ազդեցություններին, այնուամենայնիվ, մեծ մասամբ պահպանում է իր հայկական ինքնությունն ու քաղաքակրթական և մշակութային բնութագիրը: Հետևաբար, այն նույնպես գտնվում է ընդհանուր հայկական քաղաքակրթական և մշակութային դաշտում: Ի տարբերություն, օրինակ, հրեական սփյուռքի, որի ներկայացուցիչները գրեթե կորցրել էին իրենց ազգային ինքնությունը նախքան Պաղեստին ներգաղթը և, հետևաբար, խնդիր կար գրեթե ուծացած, օտարացած, այլ ինքնություն ունեցող անձին վերադարձնել հրեական ինքնությանը, այն է՝ կերտել նոր ինքնություն՝ իր բաղադրիչներով հանդերձ: Հայկական սփյուռքի ներկայացուցիչները մեծ հաշվով չունեն այդ խնդիրը: Սփյուռքի հայությունը հայաստանաբնակ հայության հետ միասին կազմում են մեկ միասնական ազգային քաղաքակրթական ամբողջություն: Մասնագիտական առարկայական բնորոշմամբ՝ «Արևելահայերիս համար այսօր էլ առանձնաբար դժվարություն չկա կարդալու և հասկանալու Վարուժան կամ Համաստեղ, իսկ սփյուռքի հայը արևմտահայերենով լիարժեք հաղորդակցվում է արևելահայի հետ»[8]: Վատագույն դեպքում սփյուռքը կարելի է համարել հայկական ազգային-քաղաքակրթական ինքնության մի ենթաշերտ կամ ենթամշակույթ:

Ինչ վերաբերում է հաճախ շահարկվող իբրև թե նվաստացուցիչ պիտակավորումներին, ապա, նախ՝ այդպիսիք կենցաղային մակարդակից երբեք վեր չեն բարձրացել, և երկրորդ՝ նման պիտակավորումներ արվում են հայության այլ ենթամշակույթների կամ ենթաշերտերի նկատմամբ նույնպես, ինչը ամենևին չի վկայում վերջիններիս օտարվածության մասին: Մի բան ակնհայտ է. պետական քաղաքականության մակարդակով երբեք որևէ խտրականություն չի եղել սփյուռքահայերի նկատմամբ:

Ինչ վերաբերում է խորհրդային տարիներին բռնաճնշումների ենթարկված հայրենադարձներին, ապա դա էլ պայմանավորված էր վարչակարգի էությամբ, այլ ոչ թե հայրենադարձների նկատմամբ պետական իշխանությունների հատուկ վերաբերմունքով: Բռնաճնշումների տարիներին հայրենադարձներից ոչ պակաս տուժել են նաև հայ (նաև խորհրդային) հասարակության այլ շերտեր:

[8] *Ավետիսյան Յու.,* Հայրենադարձությունը և արևելահայերենի ու արևմտահայերենի մերձեցման ուղիները, «1946-1948թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր» համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., Լիմուշ, 2009, էջ 175:

Վերջապես, ի՞նչը կարող է լինել հայ հասարակության մեջ սոցիալ-քաղաքակրթական առումով սփյուռքահայ հայրենադարձների ինտեգրման՝ տեղի հասարակության և հայրենադարձների միջև որևէ պատնեշի բացակայության ավելի մեծ ապացույց, քան բազմաթիվ հայրենադարձների տպավորիչ հաջողությունները գործունեության ամենատարբեր բնագավառներում (քաղաքականություն, գիտություն, մշակույթ և այլն)։ Չէ՞ որ մեծ թվով հայրենադարձներ են բարձր դիրքերի ու ճանաչման հասել իրենց բնագավառներում։

Այսպիսով, Մերձավոր և Միջին Արևելքից հայրենադարձների ինտեգրման հարցում քաղաքակրթական խնդիրներ գրեթե չկան։ Հետևաբար, առավել նպատակահարմար է շեշտադրումը կատարել ինտեգրման սոցիալ-տնտեսական տեսանկյունների վրա[9]։

[9] Մանրամասն տե՛ս *Հովյան Վ.,* Մերձավոր և Միջին Արևելքի հայ համայնքներն արդի փուլում. հայրենադարձության խնդիրը, 21-րդ ԴԱՐ, թիվ 4, 2017, էջ 102-112։

Հուշագիր հեղինակին

«Գլոբուս» վերլուծական հանդեսը հրապարակում է վերլուծական բնույթի հոդվածներ՝ նվիրված Հայաստանի և Հայության ռազմաքաղաքական, տեղեկատվական և վերջինիս մեջ ընդգրկված քաղաքակրթական ու հոգևոր անվտանգության խնդիրներին, հայկական համայնքների և տարալեզու-տարադավան հայերի կազմակերպչական անվտանգության հիմնահարցերին:

«Գլոբուս» ամսագրի խմբագրական խորհրդի կողմից *պատվիրված* նյութերը հանդիսանում են «Նորավանք» ԳԿՀ-ի սեփականությունը: Ձեռագրերը գրախոսվում են: «Գլոբուս» հանդեսի հրապարակումները արտահայտում են հեղինակների տեսակետները:

Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր և համակարգչային շարվածքով (*MS WORD* ծրագրով), «*Sylfaen*» տառատեսակով, 11 տառաչափով (ֆոնտով), ծավալը չպետք է գերազանցի 4 էջը:
2. Առաջին անգամ հոդված ներկայացնելիս պարտադիր կցել հեղինակի ինքնակենսագրությունը *(CV)*:
3. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, լուսանցքները ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 2 սմ: Տողերի միջև հեռավորությունը՝ 1.5:
4. Ինտերնետային աղբյուրների հղումները նշել տողատակում:

Խմբագրություն

«ԳԼՈԲՈՒՍ» ամսագիր
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ globus@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 21.05.2018թ.
Թիվ 4 (93), 2018թ.
Տպաքանակը՝ 150։

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 4 մամուլ։ Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «Հայկարլի» ՍՊԸ տպարանում